23
ՀՈԿՏԵՄԲԵՐ
2024

Luys Lnyu®

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵԿՏՈՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՀՐԱՆԻ ՈՒ ԱՆԿԱՐԱՅԻ ՄԻՋԵՎ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ ՏԱՐԱՆՑՄԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵԿՏՈՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՀՐԱՆԻ ՈՒ ԱՆԿԱՐԱՅԻ ՄԻՋԵՎ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ ՏԱՐԱՆՑՄԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Luys Lույս®

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ՌՈՒՍԱԿԱՆ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵԿՏՈՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 2022Թ. ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԻՑ ՀԵՏՈ 3

2. ԹՈՒՐՔԻԱՅԻ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՆԳՈՒՅՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .. 19

3. ԻՐԱՆԻ ՆՈՐ ԴԵՐԸ ՌԴ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵԿՏՈՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ..35

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 47

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2022թ. փետրվարին սկսած ռուս-ուկրաինական պատերազմից հետո Ռուսաստանի դեմ արևմտյան պատժամիջոցների մեծ մասը միտված էր առաջին հերթին հարվածելու ՌԴ տնտեսության ամենաազդեցիկ՝ էներգետիկ հատվածին: Այդ իրադարձությունները արմատապես փոխեցին միջազգային էներգետիկ շուկայի կառուցվածքն ու կանոնները, ինչը իր հերթին Մոսկվային ստիպեց վերանայել իր էներգետիկ քաղաքականության առաջնահերթությունները:

Ռուսական էներգակիրների՝ առաջին հերթին բնական գազի և նավթի առաջնային՝ եվրոպական շուկայի զգալի կրճատումը ՌԴ իշխանություններին ստիպեց մի կողմից արագ դիվերսիֆիկացնել էներգակիրների արտահանման ուղղությունները՝ ի հաշիվ արևելյան շուկաների, մյուս կողմից փնտրել սողանցքներ, որոնք հնարավորություն կտային կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում պահպանել ներկայությունը եվրոպական շուկայում, առանց որի ռուսական էներգետիկ հսկաները կարող էին հայտնվել սնանկացման եզրին: Դեպի արևելք և արևմուտք էներգակիրների արտահանման գործընթացը կանոնակարգելու և դրա անխափան գործունեության համար երկարաժամկետ երաշխիքներ ստեղծելու նպատակով Ռուսաստանին հարկավոր էին վստահելի գործընկերներ, որոնք մի կողմից ի վիճակի կլինեին դիմակայել Արևմուտքի քաղաքական և տնտեսական ճնշումներին, մյուս կողմից իրենց աշխարհագրական դիրքով և ենթակառուցվածքներով կհամապատասխանեին ռուսական էներգակիրների տարանցման հարցում առկա բարդ պայմաններին:

Դեռևս 2022թ. հոկտեմբերին ՌԴ նախագահը հանդես եկավ Թուրքիայում խոշոր գազային հանգույց ստեղծելու առաջարկով[1], որը պետք է մի կողմից ապահովեր դեպի Եվրոպա ռուսական գազի մատակարարման շարունակականությունը, ինչն էականորեն խաթարվել էր Հյուսիսային հոսքերի պայթեցումից հետո, մյուս կողմից կարևոր դերակատարություն ստանձներ եվրոպական գազի շուկայում գնագոյացման և գնային քաղաքականության հարցում: Թեև գաղափարը միանգամից դրական արձագանք գտավ Թուրքիայում, սակայն առաջարկից գրեթե երկու տարի անց ֆորմալ առումով այս ծրագիրը դեռևս իրականացման փուլում է և բախվում է մի շարք բյուրոկրատական և քաղաքական խոչընդոտների: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ ռուս-ուկրաինական պատերազմից ի վեր Թուրքիան կարողացել է զգալիորեն ավելացնել իր կշիռը՝ որպես ՌԴ-ից դեպի Եվրոպա գազի և նավթի տարանցման հիմնական տարանցիկ հանգույց: Այսօր ռուսական խողովակային գազի կեսից ավելին դեպի Եվրոպա է

[1] “Путин предложил создать в Турции крупнейший газовый хаб”, РБК, 12 окт 2022, https://www.rbc.ru/economics/12/10/2022/6346a1fc9a794776a3072018 (այցելվել է 13.10.2023թ.):

մատակարարվում հենց Թուրքիայի տարածքով, իսկ թուրքական նավթային կազմակերպությունները դարձել են ռուսական նավթի վերամշակման և դեպի ԵՄ վերաարտահանման գլխավոր շահառուները, ինչը հսկայական, այդ թվում՝ ստվերային եկամուտներ է բերում թուրքական տնտեսությանը:

Միևնույն ժամանակ, ուկրաինական ճգնաժամից ի վեր ռուսական էներգակիրների արտահանման ուղղությունների կտրուկ փոփոխությունը դեպի արևելք, առաջին հերթին՝ Չինաստան և Հնդկաստան, ինչպես նաև ռուսական էներգակիրներից վերջնականապես հրաժարվելու ԵՄ քաղաքականությունը Մոսկվային ստիպեցին վերանայել էներգակիրների արտահանման իր երկարաժամկետ քաղաքականությունը՝ ավելի մեծ ուշադրություն հատկացնելով դեպի Արևելք մատակարարումների համար նպաստավոր պայմանների և ենթակառուցվածքների ձևավորմանը: Հաշվի առնելով Արևելյան և Հարավային Ասիայի երկրների կողմից ռուսական էներգակիրների նկատմամբ աճող հետաքրքրությունը, աշխարհաքաղաքական տեսանկյունից այդ շուկաների հասանելիությունը ինչպես նաև աճող պահանջարկը՝ Ռուսաստանը ակտիվորեն աշխատում է դեպի Չինաստան, Հնդկաստան, Պակիստան և տարածաշրջանի մյուս երկրներ սեփական էներգակիրների արտահանման հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ:

Իրանն իր ենթակառուցվածքներով, աշխարհագրական դիրքով, աշխարհաքաղաքական կողմնորոշմամբ և արևմտյան պատժամիջոցների նկատմամբ իմունիտետով կարող է առանցքային հանգույց դառնալ դեպի արևելք ռուսական էներգակիրների արտահանման վեկտորի փոփոխության երկարաժամկետ ծրագրերում: Իրանը բնական գազի և նավթի հսկայական պաշարներով, արևմտյան պատժամիջոցներին դիմագրավելու եզակի փորձով կարող է ոչ միայն կարևոր տրանզիտային դերակատարություն ստանձնել ռուսական էներգակիրների արտահանման համար, այլև Ռուսաստանի հետ ձևավորել յուրահատուկ էներգետիկ դաշինք: Ընդ որում, հարկ է նկատել, որ Եվրոպական էներգետիկ շուկայի նկատմամբ ՌԴ հետաքրքրության աստիճանական նվազումը և Արևելյան ու Հարավային Ասիայում գազի և նավթի պահանջարկի ակնկալվող աճը երկարաժամկետ հեռանկարում կարող են զգալիորեն ավելացնել էներգետիկ հանգույց դառնալու հարցում Իրանի ներուժը, այնինչ Թուրքիան այժմ, ըստ երևույթին, գտնվում է իր այդ ներուժի իրացման բարձրակետում:

Սույն հոդվածի շրջանակներում փորձել ենք վերլուծել Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության իրանական և թուրքական ուղղությունները՝ դիտարկելով ռուսական էներգակիրների արտահանման վեկտորի փոփոխությունները 2022թ. Ուկրաինայում ռազմական հակամարտության

մեկնարկից ի վեր: Փորձել ենք հասկանալ էներգետիկ հանգույց դառնալու հարցում Թուրքիայի հավակնություններն ու հնարավորությունները, ինչպես նաև գնահատել արդի պայմաններում Իրանի նոր դերը ՌԴ էներգետիկ քաղաքականության մեջ՝ այն դիտարկելով Հարավային Կովկասի երկրների վրա հնարավոր ազդեցության տեսանկյունից:

1. ՌՈՒՍԱԿԱՆ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵԿՏՈՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 2022Թ. ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԻՑ ՀԵՏՈ

Ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո համաշխարհային էներգետիկ շուկայում տեղի ունեցած տեկտոնական տեղաշարժերի արդյունքում Ռուսաստանը ստիպված էր վերանայել էներգակիրների արտահանման իր կարճաժամկետ և երկարաժամկետ քաղաքականությունը: Արդյունքում 2022-2024թթ. նշանավորվեցին ռուսական էներգակիրների արտահանման վեկտորի էական փոփոխությամբ՝ արևմուտքից դեպի արևելք, առաջին հերթին՝ Չինաստան, Հնդկաստան, Մերձավոր Արևելք և Հարավային Ասիա[2]:

Համաշխարհային էներգետիկ շուկաներում 2023 թվականը առհասարակ նշանավորվեց Քովիդ-19-ի և ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ի հայտ եկած անոմալիաների աստիճանաբար թուլացմամբ և համաշխարհային էներգետիկայի կայունացմամբ: 2023-ին էներգակիրների արտադրության և սպառման ռեկորդային ցուցանիշներ գրանցվեցին աշխարհի մի շարք տարածաշրջաններում, ինչն ուղեկցվեց էներգակիրների նկատմամբ մեծ պահանջարկի, հետևաբար նաև միջազգային բարձր գների պահպանմամբ: Սա Ռուսաստանին հնարավորություն տվեց ավելի սահուն անցնել էներգակիրների արտահանման վեկտորի փոփոխության բարդ գործընթացը և խուսափել էական տնտեսական ցնցումներից:

Այսպես, նախորդ տարի չմշակված նավթի համաշխարհային սպառումը առաջին անգամ գերազանցեց օրական 100 մլն բարել ցուցանիշը, իսկ ածխի նկատմամբ պահանջարկը գերազանցեց 2022-ի ռեկորդային ցուցանիշը: Ընդհանուր առմամբ առաջնային էներգիայի սպառումը 2022-ի համեմատ 2023-ին աճել է 2 տոկոսով, իսկ նախաքովիդյան 2019-ի համեմատ աճը կազմել է 5%: Բնական գազի նկատմամբ համաշխարհային պահանջարկը նույնպես չնչին, բայց աճ է գրանցել[3]: Ընդ որում, ուշագրավ է, որ եթե 2023-ին Եվրոպայում նավթի

[2] "Ukraine war upended energy markets forever", Ben Geman, Axios, Jan 23, 2023, https://www.axios.com/2023/01/23/ukraine-war-russia-energy-markets (այցելվել է 13.10.2023թ.):
[3] "Statistical Review of World Energy", 73rd edition, The Energy Institute (EI), 2024, https://www.energyinst.org/statistical-review (այցելվել է 13.10.2023թ.):

սպառումը մոտ մեկ տոկոսով կրճատվել է՝ կազմելով մոտ 13,9 մլն բարել/օր, ապա Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում այն աճել է շուրջ 5%-ով՝ կազմելով մոտ 38 մլն բարել/օր: Չնայած «Բրենթ» տեսակի հում նավթի միջին գինը 2023-ին նախորդ տարվա համեմատ նվազել շուրջ 18%-ով ($83/բարել), սակայն այն 29%-ով ավելի է նախաքովիդյան 2019թ. ցուցանիշից: Նույնը կարելի է պնդել բնական գազի և ածխի պարագայում[4]: Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ 2023-ը ինչպես պահանջարկի աճի, այնպես էլ բարձր գների պահպանման տեսանկյունից նպաստավոր է եղել առաջնային էներգակիրներ արտահանող երկրների, այդ թվում՝ ՌԴ համար:

Ընդհանուր առմամբ համաշխարհային էներգիայի սպառման աշխարհագրության փոփոխության դինամիկան համահունչ է էներգակիրների արտահանման վեկտորի փոփոխության՝ ռուսական քաղաքականության հետ[5]: Այսպես, ըստ բրիտանական «Էներգետիկայի ինստիտուտ» կազմակերպության կողմից հրապարակված «Համաշխարհային էներգիայի 2023թ. վիճակագրական վերլուծության»՝ 2023-ին առաջնային էներգիայի սպառման շուրջ կեսը բաժին է ընկել Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանին, այնինչ ԵՄ մասնաբաժինը կազմել է ընդամենը համաշխարհային սպառման 9%-ը: Միայն Չինաստանը առաջնային էներգիայի սպառմամբ գերազանցում է ԱՄՆ և ԵՄ ցուցանիշը միասին վերցված: Ընդ որում, 2023-ին Չինաստանի կոմերցիոն էներգետիկ զամբյուղի 94%-ը կազմել են հանածո վառելիքները և միայն 6 տոկոսն է բաժին ընկել միջուկային էներգիային և հիդրոէներգիային[6], այնինչ ԵՄ-ն իր կանաչ էներգիայի քաղաքականությամբ ձգտում է նվազագույնի հասցնել կախվածությունը հանածո վառելիքներից, ինչը երկարաժամկետ հեռանկարում կասկածի տակ է դնում ԵՄ էներգետիկ շուկայի գրավչությունը էներգակիրների արտահանման համար[7]:

---

[4] "Statistical Review of World Energy", 73rd edition, The Energy Institute (EI), 2024, https://www.energyinst.org/statistical-review (այցելվել է 13.10.2023թ.):

[5] "Россия поставила в АТР в 2023 году более 80% экспортируемой нефти и 35% нефтепродуктов", ТАСС, МОСКВА, 2 апреля 2024, https://tass.ru/ekonomika/20420751 (այցելվել է 13.10.2023թ.):

[6] "New energy dominance: America versus China", Authors : Lydia Powell | Akhilesh Sati | Vinod Kumar Tomar, Observer research foundation(ORF), Published on Aug 07, 2024, https://www.orfonline.org/expert-speak/new-energy-dominance-america-versus-china (այցելվել է 13.10.2023թ.):

[7] "Нефть пошла на Восток", Михаил Калмацкий, 19.12.2023, https://rg.ru/2023/12/19/barrel-smenil-marshrut.html (այցելվել է 13.10.2023թ.):



[8]

Ռուսական էներգակիրների կարևոր շուկաներ հանդիսացող՝ միայն Չինաստանն ու Հնդկաստանը միասին առաջնային էներգիայի սպառման ցուցանիշով մոտ 4 անգամ գերազանցում են ԵՄ-ին: Իսկ ահա ռուսական տնտեսության համար առանցքային նշանակություն ունեցող նավթի համաշխարհային սպառման շուրջ 22%-ն է բաժին ընկնում Չինաստանին և Հնդկաստանին, որոնց համար Ռուսաստանը 2023-ին հանդիսացել է ամենախոշոր մատակարարը: Առհասարակ, Չինաստանի և Հնդկաստանի նավթի ներմուծման կառուցվածքում առանցքային տեղ են զբաղեցնում արևմտյան պատժամիջոցների ներքո գտնվող երկրները՝ Իրանը, Ռուսաստանը և Վենեսուելան[9]: Մյուս կողմից, ԵՄ մասնաբաժինը նավթի համաշխարհային սպառման մեջ 2023-ին կազմել է ընդամենը 10%, որում ռուսական նավթի մասնաբաժինը բավական համեստ է:

[8] "Statistical Review of World Energy", 73rd edition, The Energy Institute (EI), 2024, https://www.energyinst.org/statistical-review (այցելվել է 13.10.2023թ.):

[9] "Oil Market Interventions and Consequences", Commentary by Ben Cahill and Adi Imsirovic, Center for Strategic & International Studies CSIS, Published July 16, 2024, https://www.csis.org/analysis/oil-market-interventions-and-consequences (այցելվել է 13.10.2023թ.):



[10]

Ընդ որում, կարևոր են ոչ միայն ստատիկ ցուցանիշները, այլև դրանց դինամիկան: 2013-2023թթ. ԵՄ-ում նավթի սպառումը նվազել է տարեկան շուրջ 0,4%-ով՝ ընդհանուր 7 տոկոսով, մինչդեռ նույն ժամանակահատվածում Չինաստանում այն աճել է տարեկան 4,6%-ով՝ ընդհանուր շուրջ 57%-ով: Հնդկաստանում աճը կազմել է տարեկան 3,8%, ընդհանուր աճը՝ շուրջ 45%: 2023թ. Չինաստանն ու Հնդկաստանը միասին սպառել են ավելի քան 2,1 անգամ ավելի շատ նավթ, քան ԵՄ երկրները, այնինչ 2013-ին տարբերությունը շուրջ 1,3 էր: 2023-ին ՌԴ կողմից հում նավթի արտահանման շուրջ 80%-ը բաժին է հասել Չինաստանին և Հնդկաստանին՝ համապատասխանաբար 107 և 82 մլն տոննա: Ընդ որում, ինչպես Չինաստանի, այնպես էլ Հնդկաստանի համար Ռուսաստանը եղել է չմշակված նավթի գլխավոր մատակարարը՝ համապատասխանաբար 19% և 35% մասնաբաժնով: Ընդհանուր առմամբ դեպի Չինաստան և Հնդկաստան ռուսական չմշակված նավթի ներմուծումը 2023-ին ավելացել է 53%-ով, մինչդեռ դեպի Եվրոպա ներմուծումը կրճատվել է 72%-ով: Ինչ վերաբերում է նավթի վաճառքից ստացած եկամուտներին, ապա 2023-ին առաջատար գնորդներից

[10] "Statistical Review of World Energy", 73rd edition, The Energy Institute (EI), 2024, https://www.energyinst.org/statistical-review (այցելվել է 13.10.2023թ.):

Չինաստանը ՌԴ-ին վճարել է շուրջ 82 մլրդ եվրո, Հնդկաստանը՝ 47 մլրդ եվրո, Թուրքիան՝ 34 մլրդ եվրո[11]:

Զմշակված նավթի արտահանումը ՌԴ-ից դեպի տարբեր երկրներ և տարածաշրջաններ, 2023թ. (տոկոս)



12

Նավթամթերքի պարագայում ՌԴ արտահանման շուկաներն ավելի դիվերսիֆիկացված են. արտահանման շուրջ 20 տոկոսը 2023-ին ուղղվել է դեպի Չինաստան և Հնդկաստան, ևս 18%-ը՝ դեպի Թուրքիա: Ընդհանուր առմամբ ռուսական նավթամթերքի շուրջ 71% -ը ուղղվել է դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, Մերձավոր Արևելք և Թուրքիա, 15%-ը՝ դեպի Աֆրիկա, 6%-ը՝ դեպի Բրազիլիա[13]: Հատկանշական է, որ նավթ արդյունահանող այնպիսի երկրներ,

[11] "The Future of Russian Energy Exports under Sanctions", Masahide Takahash, The Sasakawa Peace Foundation, 2024/03/11, https://www.spf.org/iina/en/articles/takahashi_01.html (այցելվել է 13.10.2023թ.):

[12] "Country Analysis Brief:Russia", U.S. Energy Information Administration, U.S. Department of Energy,Washington, April 29, 2024, https://www.eia.gov/international/content/analysis/countries_long/Russia/pdf/russia.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

[13] "Country Analysis Brief:Russia", U.S. Energy Information Administration, U.S. Department of Energy, Washington, April 29, 2024,

ինչպիսիք են Սաուդյան Արաբիան և ԱՄԷ-ն, 2023-ին էականորեն ավելացրել են ռուսական նավթամթերքի ներմուծումը, որի մեծ մասը վերաարտահանվում է դեպի եվրոպական և ասիական շուկաներ: Ռուսական նավթի և նավթամթերքի վերամշակումից ու վերավաճառքից զգալի եկամուտներ են ստանում նաև Թուրքիան և Հնդկաստանը[14]:

Պահանջարկի առումով նմանատիպ իրավիճակ է նաև բնական գազի պարագայում՝ մի տարբերությամբ, որ ենթակառուցվածքների բացակայությունը թույլ չի տալիս նույն տեմպով ռուսական գազի արտահանումը ԵՄ-ից վերաուղղել դեպի ասիական շուկաներ, ինչպես նավթի և ածխի դեպքում[15]: Արդյունքում, 2023-ին նախապատերազմական 2021-ի համեմատ ռուսական բնական գազի արտահանումը կրճատվել է ավելի քան 40 տոկոսով[16]:

ԵՄ-ում բնական գազի սպառումը 2013-2023թթ. կրճատվել է շուրջ 15 տոկոսով (հիմնականում ուկրաինական ճգնաժամից հետո), միաժամանակ Չինաստանում բնական գազի սպառումը նույն ժամանակահատվածում ավելացել է շուրջ 135%-ով, տարեկան միջինը՝ 8,9%-ով: Հնդկաստանում նույն ժամանակահատվածում սպառումը ավելացել է շուրջ 28%-ով, տարեկան շուրջ 2,5%-ով: Միայն Չինաստանն ու Հնդկաստանը 2023-ին սպառել են շուրջ 500 մլրդ խ/մ գազ, ինչը շուրջ 1,8 անգամ ավելի է ԵՄ ցուցանիշից, ինչպես նաև գերազանցում է ամբողջ Եվրոպայի, ներառյալ Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի սպառումը: Համեմատության համար նշենք, որ 2013-ին ԵՄ-ում բնական գազի սպառումը 1,7 անգամ գերազանցում էր Չինաստանի և Հնդկաստանի ընդհանուր սպառումը[17]:

---

https://www.eia.gov/international/content/analysis/countries_long/Russia/pdf/russia.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

[14] "The Future of Russian Energy Exports under Sanctions", Masahide Takahash, The Sasakawa Peace Foundation, 2024/03/11, https://www.spf.org/iina/en/articles/takahashi_01.html (այցելվել է 13.10.2023թ.):

[15] "Country Analysis Brief:Russia", U.S. Energy Information Administration, U.S. Department of Energy, Washington, April 29, 2024, https://www.eia.gov/international/content/analysis/countries_long/Russia/pdf/russia.pdf(այցելվել է 13.10.2023թ.):

[16] "Russia's Gas Export Strategy: Adapting to the New Reality", Commentary by Anne-Sophie Corbeau & Tatiana Mitrova, Center on Global Energy Policy at Columbia University, School of International and Public Affairs, February 21, 2024, https://www.energypolicy.columbia.edu/publications/russias-gas-export-strategy-adapting-to-the-new-reality/ (այցելվել է 13.10.2023թ.):

[17] "Statistical Review of World Energy", 73rd edition, The Energy Institute (EI), 2024, https://www.energyinst.org/statistical-review (այցելվել է 13.10.2023թ.):

ՌԴ բնական գազի (հեղուկ և խողովակային) արտահանումը դեպի տարբեր երկրներ և տարածաշրջաններ, 2023թ. (տոկոս)



[18]

Այսպես, 2023-ին ռուսական հեղուկ և խողովակային գազի արտահանման միայն 32%-ն է ուղղվել դեպի ԵՄ, ևս 32%-ն ուղղվել է դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, 15%-ը՝ դեպի Թուրքիա, ևս 18%-ը՝ դեպի ԱՊՀ երկրներ: Այսպիսով, ինչպես նավթի և նավթամթերքի դեպքում, այնպես էլ բնական գազի պարագայում ակնհայտ է ռուսական արտահանման վեկտորի փոփոխությունը դեպի Եվրասիա. ռուսական գազի արտահանման 65%-ն ուղղվել է դեպի ԱՊՀ, Թուրքիա և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան:

2023թ. ածխի համաշխարհային ներմուծման 43,8%-ը բաժին է հասել Չինաստանին և Հնդկաստանին, այնինչ Եվրոպայի մասնաբաժինը շուրջ 10% է եղել՝ կրճատման ակնհայտ միտումով: Ռուսաստանը 2023թ. ապահովել է ածխի համաշխարհային արտահանման 15,2%-ը, որի շուրջ 60%-ն ուղղվել է Չինաստան և Հնդկաստան, և միայն 14%-ը՝ դեպի Եվրոպա (հիմնականում՝ Թուրքիա): Առհասարակ, 2023-ին ռուսական ածխի գրեթե ողջ ծավալը՝ 97%-ը, ուղղվել է դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան և Թուրքիա[19]:

---

[18] "Statistical Review of World Energy", 73rd edition, The Energy Institute (EI), 2024, https://www.energyinst.org/statistical-review (այցելվել է 13.10.2023թ.):

[19] "Statistical Review of World Energy", 73rd edition, The Energy Institute (EI), 2024, https://www.energyinst.org/statistical-review (այցելվել է 13.10.2023թ.):

Այսպիսով, ռուսական առաջնային էներգառեսուրսների ճնշող մեծամասնությունը 2023-ին ուղղվել է դեպի ԱՊՀ, Թուրքիա և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան՝ չմշակված նավթի շուրջ 90%-ը, նավթամթերքի 60%-ը, բնական գազի 65%-ը, ածխի 97%-ը: Միաժամանակ ՌԴ-ն դեպի Եվրոպա (բացի Թուրքիայից) է ուղղել չմշակված նավթի արտահանման շուրջ 10%-ը, նավթամթերքի շուրջ 5%-ը, բնական գազի 32%-ը, ածխի 1%-ը: Ըստ Եվրոստատի տվյալների՝ ՌԴ արտահանումը դեպի ԵՄ երկրներ 2023-ին կազմել է մոտ 50 մլրդ եվրո: ԵՄ երկրները մասնաբաժինը ՌԴ արտահանման մեջ 2023-ին նախորդ տարվա համեմատ 36%-ից նվազել է մինչև 15%:[20] Ասիական տարածաշրջանի մասնաբաժինը ՌԴ արտահանման մեջ 49%-ից հասել է 72%-ի: Միայն դեպի Չինաստան ՌԴ արտահանումը 2023-ին կազմել է շուրջ 130 մլրդ դոլար, ինչը 2,5 անգամ ավելի է ԵՄ ցուցանիշից[21]:



Ինչ վերաբերում առաջնային էներգիայի մյուս կարևոր աղբյուրին՝ միջուկային էներգիային, թեև այստեղ Արևմուտքը չի շտապում հրաժարվել ռուսական մատակարարումներից, սակայն միայն մեկ ցուցանիշի հիշատակումը բավարար է

[20] "ЕС закупил у России почти на €30 млрд нефти и газа в прошлом году", РБК, 16 фев, 2024г., https://www.rbc.ru/economics/16/02/2024/65ce0b359a79470ffd7493db (այցելվել է 13.10.2023թ.):
[21] "Два сценария развития экспорта от ЦБ: по какому из них пойдет Россия", РБК, 04 мар, 2024г., https://www.rbc.ru/economics/04/03/2024/65df10179a794720b4dab8cc (այցելվել է 13.10.2023թ.):

հասկանալու համար, որ այստեղ նույնպես առաջիկա տասնամյակներում առաջնային շուկան լինելու են Չինաստանն ու Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը. այսպես, 2000 թվականից ի վեր աշխարհում կառուցված միջուկային էներգիայի նոր կարողությունների շուրջ 60%-ը կառուցվել է Չինաստանում[22]: Ինչևէ, ուրանի արտահանման արդյունքում ստացվող եկամուտների մասնաբաժինը ՌԴ էներգակիրների արտահանման կառուցվածքում մեծ չէ[23]:

Եվրոպական էներգետիկ շուկայում ՌԴ դիրքերի թուլացմանը զուգահեռ, այստեղ էականորեն ամրապնդվել է ԱՄՆ մենաշնորհը: 2023-ին ԱՄՆ-ը դարձավ ՀԲԳ ամենախոշոր արտահանող երկիրը՝ 114 մլրդ խ/մ ցուցանիշով՝ առաջ անցնելով Կատարից: Հատկանշական է, որ ամերիկյան ՀԲԳ արտահանման ցուցանիշը 2013-2023թթ. տարեկան ընդամենը 0,2 մլրդ խ/մ-ից հասել է 114-ի, ինչն ընդգծում է, որ ուկրաինական պատերազմը, ի թիվս այլոց, նաև Եվրոպայի էներգետիկ շուկայում առավելություն ստանալու նպատակ է հետապնդում: Դեռ 2022-ին հրապարակած վերլուծության մեջ «Լույս» հիմնադրամը անդրադարձել էր միջազգային էներգետիկ շուկայում ՌԴ-ԱՄՆ մրցակցությանը՝ նշելով, որ գազի արդյունահանման 2021թ. տեմպի պահպանման պարագայում ԱՄՆ պաշարները կսպառվեն 13 տարուց, իսկ ՌԴ պաշարները՝ 53 տարի անց: Նմանօրինակ իրավիճակ է նաև նավթի արդյունահանության պարագայում: Այսինքն՝ ոլորտում ԱՄՆ-ՌԴ մրցակցությունը կարճաժամկետ և միջնաժամկետ բնույթ է կրում, ուստի ԱՄՆ-ը փորձելու է առաջիկա տարիներին առավելագույնի հասցնել այդ մրցակցության արդյունքում ստացվող քաղաքական առավելությունները, ինչն առաջին հերթին դրսևորվում է եվրոպական շուկայում[24]:

Ըստ «Բրյուգել» հետազոտական կենտրոնի՝ բնական գազի ԵՄ ներմուծման պարբերաբար թարմացվող տվյալների բազայի[25], 2023-ին ԵՄ-ն ներմուծել է ընդհանուր առմամբ 322,7 մլրդ խ/մ գազ, իսկ ամենախոշոր մատակարարը եղել է Նորվեգիան՝ 28% մասնաբաժնով: ԵՄ երկրորդ խոշոր մատակարարը ԱՄՆ-ն է, որը 2023-ին ապահովել է բնական գազի ԵՄ ներմուծման շուրջ 19%-ը: Ռուսաստանը,

---

[22] "Statistical Review of World Energy", 73rd edition, The Energy Institute (EI), 2024, https://www.energyinst.org/statistical-review (այցելվել է 13.10.2023թ.):

[23] "The European Union-Russia energy divorce: state of play", Authors: Ben McWilliams, Giovanni Sgaravatti, Simone Tagliapietra, Georg Zachmann, BRUGEL, 22 February 2024, https://www.bruegel.org/analysis/european-union-russia-energy-divorce-state-play (այցելվել է 13.10.2023թ.):

[24] «Էներգետիկ ճգնաժամը Եվրոպայում և ադրբեջանական գազի գործոնը», «Լույս» հիմնադրամ, 20.12.2022թ., https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=333 (այցելվել է 13.10.2023թ.):

[25] "European natural gas imports", This dataset aggregates daily data on European natural gas import flows and storage levels, BRUEGEL, Georg Zachmann, Ben McWilliams, Ugnė Keliauskaitė, Giovanni Sgaravatti, 10 October 2024, https://www.bruegel.org/dataset/european-natural-gas-imports (այցելվել է 13.10.2024թ.):

որ նախքան ուկրաինական պատերազմը ապահովում էր ԵՄ բնական գազի ներմուծման գերակշիռ մասը, 2023-ին ապահովել է ԵՄ ներմուծման շուրջ 16%-ը: Ընդ որում, զգալիորեն ավելացել է ռուսական հեղուկ բնական գազի (ՀԲԳ) մատակարարումը, այնինչ խողովակային մատակարարումները էականորեն կրճատվել են՝ սահմանափակվելով միայն ուկրաինական և թուրքական տրանզիտով:



[26]

ԵՄ մյուս խոշոր մատակարարներն են՝ Ալժիրը, Մեծ Բրիտանիան, Ադրբեջանը, Կատարը, Լիբիան և այլք: ԵՄ բնական գազի ներմուծման ցուցանիշների ուսումնասիրությունը հատկապես հետաքրքիր է իր աշխարհաքաղաքական համատեքստով: Հատկանշական է, որ 2023-ին առաջին անգամ ԱՄՆ-ը գերազանցել է ՌԴ-ին դեպի ԵՄ արտահանվող գազի ծավալներով:

[26] "European natural gas imports", This dataset aggregates daily data on European natural gas import flows and storage levels, BRUEGEL, Georg Zachmann, Ben McWilliams, Ugnė Keliauskaitė, Giovanni Sgaravatti, 10 October 2024, https://www.bruegel.org/dataset/european-natural-gas-imports (այցելվել է 13.10.2024թ.):

Եթե 2021-ին ԵՄ-ն Ռուսաստանից ներմուծել է 156,8 մլրդ խ/մ գազ կամ ներմուծման 43,4%-ը, ապա 2023-ին, ինչպես նշվեց, ՌԴ-ն ապահովել է ԵՄ ներմուծման ընդամենը շուրջ 16%-ը՝ 51,3 մլրդ խ/մ:



Ինչպես բնական գազի, այնպես էլ նավթի պարագայում ԵՄ-ին մատակարարման ծավալներով առաջատարները 2023-ին եղել են ԱՄՆ-ը՝ 67 մլն տոննա և Նորվեգիան՝ 53,6 մլն տոննա, իսկ 10 խոշորագույն ներմուծողների շարքում են նաև Ղազախստանը՝ 44,2 մլն տոննա, Սաուդյան Արաբիան՝ 35,2 մլն տոննա, Լիբիան՝ 34,8 մլն տոննա, Իրաքը՝ 34,2 մլն տոննա, Նիգերիան՝ 29,1 մլն տոննա, Մեծ Բրիտանիան՝ 24,1 մլն տոննա, Ռուսաստանը՝ 20,4 մլն տոննա, Ադրբեջանը՝ 20,3 մլն տոննա[27]:

[27] "Азербайджан вошел в десятку крупнейших экспортеров нефти в ЕС в 2023г", CBC TV Azerbaijan, 19 февраля 2024, https://cbctv.az/news/103402/azerbaidzan-vosel-v-desyatku-krupneisix-eksporterov-nefti-v-es-v-2023g (այցելվել է 13.10.2024թ.):



Այսպիսով, ԵՄ-ին մատակարարված նավթի ծավալներով ԱՄՆ-ն ավելի քան 3 անգամ գերազանցել է ՌԴ ցուցանիշը: Հաշվի առնելով Եվրոպայում ստեղծված աշխարհաքաղաքական իրադրությունը, Ուկրաինայում շարունակվող պատերազմը և ՌԴ-Արևմուտք հարաբերությունների դեգրադացիան՝ կարելի է ենթադրել, որ առնվազն կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում Եվրոպայի էներգետիկ շուկայում ՌԴ՝ նախապատերազմյան դիրքերի և մասնաբաժնի վերականգնումը գրեթե անհնարին է, լավագույն դեպքում կպահպանվեն 2022-2023թթ. միջին ցուցանիշները:

Եթե նավթի, նավթամթերքի և ածխի պարագայում ՌԴ-ն հաջողությամբ վերաուղղել է իր արտահանումը դեպի ասիական շուկաներ, ապա բնական գազի դեպքում գործընթացը ավելի դանդաղ է տեղի ունենում: 2021-ին Ռուսաստանը արտահանել է 202 մլրդ խ/մ խողովակային գազ՝ ինչը կազմել է համաշխարհային արտահանման 28,6%-ը, մինչդեռ 2023-ին ՌԴ մասնաբաժինը կազմել է ընդամենը 14,1% կամ ընդամենը 95 մլրդ խ/մ: Ըստ փորձագիտական գնահատականների՝ կարճաժամկետ հեռանկարում դեպի Չինաստան և ԱՊՀ երկրներ ռուսական գազի

արտահանումը լավագույն դեպքում կավելանա տարեկան շուրջ 35 մլրդ խ/մ-ով, որի մեծ մասը կապահովի Չինաստանը[28]:

Նույնիսկ դեպի Չինաստան երկու խոշոր նախագծերի՝ «Սիբիրի ուժը - 2» և «Սախալին» գազատարների կառուցման պարագայում լավագույն դեպքում դեպի Չինաստան ռուսական խողովակային գազի արտահանումը կմոտենա 100 մլրդ խ/մ՝ գրեթե այնքան, որքան կազմել է ԵՄ-ում ռուսական արտահանման կորուստը 2023-ին՝ 2021-ի համեմատ[29]: Գազի վաճառքից ստացվող եկամուտների առումով նույնպես փորձագետների կողմից ՌԴ եկամուտների էական ավելացում չի կանխատեսվում միջնաժամկետ հեռանկարում[30]. մասնավորապես 2022թ. գազի արդյունահանությունից ստացած ռեկորդային 165 մլրդ դոլար ցուցանիշը առաջիկա տարիներին կարող է ապահովվել լավագույն դեպքում մինչև 50%-ով[31]:

Ինչևէ, փորձագետները գտնում են, որ ռուսական գազի արտահանման նվազագույն շեմը եղել է 2023-ին, որից հետո արտահանումն աստիճանաբար կավելանա: Չինաստանը մնում է ռուսական գազի արտահանման ավելացման ամենաիրատեսական ուղղությունը: Ուկրաինական պատերազմից հետո Ռուսաստանն արագացված կերպով ավելացնում է «Սիբիրի ուժը» գազատարով դեպի Չինաստան մատակարարումները: Ըստ Գազպրոմի՝ 2023-ին այս խողովակաշարով գազի մատակարարումն ավելացել է 1,5 անգամ՝ կազմելով 22,7 մլրդ խ/մ, ինչը գերազանցում է պայմանագրային պարտավորությունները: Արդեն 2025թ. նախատեսվում է, որ այս գազատարի ծանրաբեռնվածությունը կհասնի նախագծային հզորությանը՝ տարեկան 38 մլրդ խ/մ: Հեռավորարևելյան խողովակաշարի (տարեկան 10 մլրդ խ/մ) և «Սիբիրի ուժը - 2» (տարեկան 50 մլրդ խ/մ) խողովակաշարերի կառուցման և շահագործման պարագայում մինչև 2030թ. լավատեսական սցենարի դեպքում դեպի ՉԺՀ խողովակային մատակարարումների ծավալը կարող է հասնել 100 մլրդ խ/մ[32]: Եթե հաշվի առնենք նաև ՀԲԳ արտահանման ծավալների շեշտակի ավելացման ռուսական ծրագրերը, կարող ենք ենթադրել, որ երկարաժամկետ հեռանկարում՝ մինչև 2030-35թթ., ՌԴ-

---

[28] "Досанкционного уровня поставок газа надо ждать не раньше 2030 года", Ольга Соловьева, 01.07.2024, https://www.ng.ru/economics/2024-07-01/1_9039_gas.html (այցելվել է 13.10.2023թ.):
[29] "Досанкционного уровня поставок газа надо ждать не раньше 2030 года", Ольга Соловьева, 01.07.2024, https://www.ng.ru/economics/2024-07-01/1_9039_gas.html (այցելվել է 13.10.2023թ.):
[30] "The European Union-Russia energy divorce: state of play", Authors: Ben McWilliams, Giovanni Sgaravatti, Simone Tagliapietra, Georg Zachmann, BRUGEL, 22 February 2024, https://www.bruegel.org/analysis/european-union-russia-energy-divorce-state-play (այցելվել է 13.10.2023թ.):
[31] "Russia's Gas Export Strategy: Adapting to the New Reality", Commentary by Anne-Sophie Corbeau & Tatiana Mitrova, Center on Global Energy Policy at Columbia University, School of International and Public Affairs, February 21, 2024, https://www.energypolicy.columbia.edu/publications/russias-gas-export-strategy-adapting-to-the-new-reality/ (այցելվել է 13.10.2023թ.):
[32] Новак: Россия быстро наращивает экспорт газа в Китай по "Силе Сибири", ТАСС, МОСКВА, 25 января, 2024г., https://www.alta.ru/external_news/107601/ (այցելվել է 13.10.2023թ.):

ն կարող է ԵՄ-ին մատակարարվող բնական գազի գրեթե ամբողջ ծավալը՝ տարեկան մինչև 150 մլրդ խ/մ, վերաուղղել դեպի Չինաստան[33]:

Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, էներգակիրների վաճառքից ստացվող եկամուտների գերակշիռ մասը՝ ավելի քան 70%-ը, Ռուսաստանն ավանդաբար ստանում է ոչ թե բնական գազի, այլ նավթի ու նավթամթերքի վաճառքից: 2023-ին, նախապատերազմական 2021-ի համեմատ, նավթի և գազի վաճառքից ստացած ՌԴ պետական բյուջեի եկամուտները կրճատվել են շուրջ 10%-ով (շուրջ 11 մլրդ դոլար), սակայն եթե հաշվի առնենք, որ 2022-ին նավթի և գազի աննախադեպ բարձր գների արդյունքում եկամուտներն ավելացել էին շուրջ 58 մլրդ դոլարով, ընդհանուր առմամբ կարող ենք եզրակացնել, որ ուկրաինական պատերազմից հետո էներգակիրների վաճառքից ստացվող ընդհանուր եկամուտները ոչ թե կրճատվել, այլ ավելացել են: Ավելին, ըստ ՌԴ 2024թ. դաշնային բյուջեի նախագծի՝ կանխատեսվում է նավթագազային եկամուտների շուրջ 30% աճ նախորդ տարվա՝ 2023-ի համեմատ, որի արդյունքում ՌԴ եկամուտները շուրջ 20 մլրդ դոլարով կգերազանցեն նախապատերազմական 2021թ. ցուցանիշը:[34]



Ըստ Էներգետիկ հետազոտությունների Օքսֆորդի ինստիտուտի 2024թ. «Ռուսաստանի նավթի և գազի արդյունահանման և արտահանման

[33] "Outlook for Russia's oil and gas production and exports", Oxford Institute for Energy Studies, March 2024, https://www.oxfordenergy.org/wpcms/wp-content/uploads/2024/03/NG-189-Outlook-for-Russias-oil-and-gas-improved-resolution.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

[34] "OIL, GAS, AND WAR: The Effect of Sanctions on the Russian Energy Industry", Atlantic Council, by Vladimir Milov, March 2024, https://www.atlanticcouncil.org/wp-content/uploads/2024/05/Oil-gas-and-war-Vladimir-Milov.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

հեռանկարները» վերլուծության, հակառակ արևմտյան պատժամիջոցների և կանխատեսումների՝ ռուսական ածխաջրածնային արդյունաբերությունը ամենևին էլ փլուզման շեմին չէ: Ավելին, ըստ փորձագետների առաջ քաշած իրատեսական սցենարի՝ ՌԴ գազի արդյունահանման ծավալը մինչև 2035թ. կարող է հասնել տարեկան 850-900 մլրդ խ/մ-ի՝ 2023-ի մոտ 700 մլրդ խ/մ-ի համեմատ: Բրիտանացի փորձագետները գտնում են, որ ռուսական էներգակիրների արտահանման վեկտորի տեղափոխումը դեպի արևելք, բնական գազի պահանջարկի աճը ՌԴ-ում և ԱՊՀ երկրներում, դեպի Ասիական շուկաներ նավթի և նավթամթերքի արտահանման ուղիների դիվերսիֆիկացիան, ինչպես նաև Ուկրաինայում պատերազմի ավարտից հետո դեպի ԵՄ էներգակիրների մատակարարման մասնակի վերականգնումը Ռուսաստանին հնարավորություն կտան մինչև 2035թ. ապահովել առնվազն տարեկան 1,3-2,3 տոկոս տնտեսական աճ, որտեղ ածխաջրածնային արդյունաբերությունը կշարունակի առանցքային նշանակություն ունենալ[35]:

Միաժամանակ, Եվրոպական էներգետիկ շուկայում Ռուսաստանի դիրքերի թուլացումը ամենևին չի նշանակում, որ երկարաժամկետ հեռանկարում Ռուսաստանը առհասարակ դուրս է գալու այդ շուկայից: «Լույս» հիմնադրամի նախկինում կատարած վերլուծությունները ցույց են տալիս, որ ԵՄ-ին նավթ և գազ մատակարարող հիմնական երկրների՝ Նորվեգիայի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ռեսուրսները խիստ սահմանափակ են և արդեն իսկ առաջիկա տասնամյակում դա կարող է լուրջ խնդիր դառնալ ԵՄ համար[36]: Արդյունահանման ներկայիս տեմպի պահպանման դեպքում ԵՄ վերոհիշյալ խոշոր մատակարարների ռեսուրսային բազան առաջիկա տասնամյակում գրեթե կսպառվի, իսկ ածխաջրածնային էներգիայից վերջնականապես հրաժարվելու եվրոպական քաղաքականության ձգձգումը վերջինիս կստիպի վերանայել էներգակիրների ներմուծման քաղաքականությունը: Միաժամանակ, հաշվի առնելով, որ այդ ընթացքում Ռուսաստանը կարող է էներգետիկ ենթակառուցվածքների մեծ մասը վերաուղղել դեպի ասիական շուկաներ, կարելի է ենթադրել, որ ԵՄ-ում ռուսական էներգակիրների նկատմամբ պահանջարկի թեկուզ մասնակի վերականգնումը տեղի կունենա ՌԴ կողմից ավելի կոշտ գնային քաղաքականության ուղեկցությամբ:

[35] "Outlook for Russia's oil and gas production and exports", Oxford Institute for Energy Studies, March 2024, https://www.oxfordenergy.org/wpcms/wp-content/uploads/2024/03/NG-189-Outlook-for-Russias-oil-and-gas-improved-resolution.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

[36] «Էներգետիկ ճգնաժամը Եվրոպայում և ադրբեջանական գազի գործոնը», «Լույս» հիմնադրամ, 20.12.2022թ., https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=333 (այցելվել է 13.10.2023թ.):

Ռուսական բնական գազի խողովակային արտահանումը դեպի Չինաստան(կանխատեսվող)



[37]

Նավթի, նավթամթերքի, բնական գազի և ածխի արտահանման հետ կապված վերոհիշյալ իրողություններն ու վիճակագրական տվյալները հաշվի առնելով՝ Ռուսաստանը բնականաբար ձգտում է սեփական էներգակիրների արտահանման վեկտորի փոփոխությունը համադրել անհրաժեշտ ենթակառուցվածքների և տարանցիկ ուղիների ձևավորման հետ: Թեև Ռուսաստանին հաջողվել է էներգակիրների արտահանման մեծ մասը վերաուղղել դեպի ասիական շուկա, իսկ ռուսական նավթը ասիական շուկայում ընդհանուր առմամբ վաճառվում է Արևմուտքի սահմանած 60 $/բարել գնային առաստաղից թանկ, սակայն կարևոր խոչընդոտներ են հանդիսանում ենթակառուցվածքների, արտահանման մշակված ուղիների, տարանցիկ երկրների հետ իրավապայմանագրային բազայի անբավարարությունը: Օրինակ, ըստ փորձագիտական գնահատականների՝ ՌԴ սևծովյան նավահանգիստներից դեպի Հնդկաստան նավթի արտահանման լոգիստիկ բարդությունները արտահանվող մեկ բարելի համար 10-15 դոլարի լրացուցիչ ծախս են ավելացնում[38]:

Եթե որպես դեպի Եվրոպա էներգակիրների՝ հիմնականում բնական գազի արտահանման կարևոր հանգույց դիտարկվում է Թուրքիան, ապա դեպի Ասիական շուկաներ աճող մատակարարումների ապահովման համար հետզհետե կարևորվում է Իրանի դերակատարությունը: Ուստի, վերլուծության հաջորդ

[37] "Outlook for Russia's oil and gas production and exports", Oxford Institute for Energy Studies, March 2024, https://www.oxfordenergy.org/wpcms/wp-content/uploads/2024/03/NG-189-Outlook-for-Russias-oil-and-gas-improved-resolution.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

[38] "OIL, GAS, AND WAR: The Effect of Sanctions on the Russian Energy Industry", Atlantic Council, by Vladimir Milov, March 2024, https://www.atlanticcouncil.org/wp-content/uploads/2024/05/Oil-gas-and-war-Vladimir-Milov.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

գլուխներում փորձել ենք ավելի մանրամասն ուսումնասիրել մի կողմից Թուրքիայի կարգավիճակը՝ որպես էներգետիկ հանգույց ռուսական էներգառեսուրսները դեպի Եվրոպա տարանցելու նպատակով, մյուս կողմից հասկանալ, թե ինչ հեռանկարներ ունի ՌԴ և Իրանի միջև էներգետիկ դաշինքի ձևավորումը, արդյո՞ք Իրանը կարող է առանցքային դերակատարում ստանձնել ռուսական էներգակիրները դեպի ասիական շուկաներ վերաուղղելու հարցում:

2. ԹՈՒՐՔԻԱՅԻ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՆԳՈՒՅՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ էներգետիկան միշտ կարևոր տեղ է զբաղեցրել, իսկ մի կողմից՝ ԵՄ-ի, մյուս կողմից՝ էներգակիրներով հարուստ իր հարևանների միջև էներգետիկ հանգույց դառնալու ձգտումը մշտապես եղել է Անկարայի առաջնահերթությունների շարքում: Ռուսաստանի հետ Թուրքիայի համագործակցությունը էներգետիկ ոլորտում զարգացել է դեռևս խորհրդային տարիներից, սակայն եթե նախկինում Արևելյան Եվրոպայի երկրներն էին հանդես գալիս որպես էներգետիկ հանգույց Ռուսաստանի և Թուրքիայի միջև, այժմ իրավիճակը 180 աստիճանով փոխվել է: Ընդ որում, էներգետիկ հանգույց դառնալու թուրքական երազանքը ոչ միայն հիմնված է նպաստավոր աշխարհաքաղաքական գործոնների վրա, այլև տնտեսական տեսանկյունից և տեխնիկապես իրագործելի է[39]:

ՌԴ-ի և ԵՄ-ի միջև էներգակիրների տարանցման հարցում Թուրքիայի կարևորությունը շեշտակիորեն մեծացավ հատկապես Ուկրաինայում բռնկված պատերազմից հետո, երբ դեպի Եվրոպա մատակարարվող ռուսական էներգակիրների մի էական հատված ավանդական տարանցման ուղիների փակման արդյունքում վերաուղղվեց դեպի Թուրքիա: Միաժամանակ, ԵՄ կողմից առավել կարևորվեց Թուրքիայի տարանցիկ դերակատարությունը՝ Կենտրոնական Ասիայից, Ադրբեջանից և Մերձավոր Արևելքից դեպի Եվրոպա էներգակիրների մատակարարման հարցում, որոնք պետք է լրացնեին ռուսական մատակարարումների կրճատման պակասուրդը:

Ի վերջո, էներգետիկ հանգույց դառնալու՝ Թուրքիայի հավակնությունների ամենախոսուն դրվագը դարձավ 2022թ. հոկտեմբերին ՌԴ նախագահի առաջարկը, երբ վերջինս Հյուսիսային հոսքերի պայթեցումից կարճ ժամանակ անց

[39] "Turkey can become an energy hub—but not by going all-in on Russian gas", By Yevgeniya Gaber, Atlantic Council, December 7, 2022 https://www.atlanticcouncil.org/blogs/turkeysource/turkey-can-become-an-energy-hub-but-not-by-going-all-in-on-russian-gas/ (այցելվել է 13.10.2023թ.):

հանդես եկավ Թուրքիայում գազային հաբ ձևավորելու նախաձեռնությամբ, որը պետք է ապահովեր Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա ռուսական գազի մատակարարման շարունակականությունը, ինչպես նաև կարևոր դերակատարություն ունենար Եվրոպայում գազի գնային քաղաքականության վրա[40]: Հանգույցը պետք է ձևավորվեր Թուրքիայի Թրակիայի շրջանում, որտեղ Սև ծովից դուրս է գալիս «Թուրքական հոսք» գազատարը, և որտեղից բնական գազը կարող է ուղղվել դեպի Եվրոպա 3 ուղղություններով՝ հարավային ուղղություն՝ դեպի Հունաստան, Իտալիա, կենտրոնական ուղղություն՝ դեպի Բուլղարիա, Ալբանիա, Կոսովո, Մակեդոնիա, Սերբիա, հյուսիսային ուղղություն՝ դեպի Ռումինիա, Սլովենիա, Հունգարիա, Գերմանիա և այլն[41]:



42

[40] "Путин предложил создать в Турции крупнейший газовый хаб", РБК, 12 окт 2022г., https://www.rbc.ru/economics/12/10/2022/6346a1fc9a794776a3072018 (այցելվել է 13.10.2023թ.):

[41] "Нужны российские инвестиции. В Турции назвали условие строительства газового хаба", ИА Neftegaz.RU, Москва, 6 мар, https://neftegaz.ru/news/transport-and-storage/772227-nuzhny-rossiyskie-investitsii-v-turtsii-nazvali-uslovie-stroitelstva-gazovogo-khaba/ (այցելվել է 13.10.2023թ.):

[42] "Understanding the Energy Drivers of Turkey's Foreign Policy", by Francesco Siccardi, Published on February 28, 2024, https://carnegieendowment.org/research/2024/02/understanding-the-energy-drivers-of-turkeys-foreign-policy?lang=en&center=europe (այցելվել է 13.10.2023թ.):

Թուրքիայի աշխարհագրական դիրքը, վերջինիս տարածքով անցնող մի շարք էներգետիկ խողովակաշարերը Անկարային իրոք դարձնում են եզակի դերակատար Եվրոպայի էներգետիկ շուկայում: 2022թ. տվյալներով Թուրքիան աշխարհում էներգակիրների 16-րդ ամենամեծ սպառողն է՝ գերազանցելով այնպիսի առաջատար տնտեսությունների, ինչպիսիք են Իտալիան, Իսպանիան, Ավստրալիան: 2001-2021թթ. Թուրքիայում էներգիայի ընդհանուր սպառումը ավելի քան կրկնապատկվել է, իսկ էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկը, ըստ պաշտոնական կանխատեսումների, մինչև 2050թ. 2022-ի համեմատ կավելանա շուրջ 55 տոկոսով: Թուրքիայում մատակարարվող էներգիայի արտադրության մեջ նավթի, գազի և ածխի մասնաբաժինը 2021-ին կազմել է 84 տոկոս, իսկ 2022թ. տվյալներով Թուրքիայում սպառված գազի գրեթե 100 տոկոսը, նավթամթերքի 91 տոկոսը և ածխի 77 տոկոսը ներմուծվել է, ընդ որում՝ Թուրքիայի էներգետիկ ծախսերը 2022-ին կազմել են ռեկորդային շուրջ 100 մլրդ դոլար: Բոլոր երեք հիմնական էներգակիրների ներմուծման հարցում Ռուսաստանը եղել է Թուրքիայի գլխավոր գործընկերը[43]:

Անկարայի դերակատարությունը հատկապես կարևոր է բնական գազի ներմուծման և տարանցման հարցում: Թուրքիայի տարածք մտնող գազատար խողովակաշարերի ընդհանուր հզորությունը կազմում է տարեկան շուրջ 90 մլրդ խ/մ, իսկ հեղուկ բնական գազի ընդունման տերմինալների ընդհանուր հզորությունը, ըստ տարբեր գնահատականների, կարող է կազմել տարեկան մինչև 20 մլրդ խ/մ (մասնավորապես, 2023-ին Թուրքիան ներմուծել է շուրջ 15 մլրդ խ/մ ՀԲԳ):

Բնական գազի ներմուծման՝ Թուրքիայի հնարավորությունները[44] (տարեկան)	
Ռուսաստանի Դաշնությունից	**47,5 մլրդ խ/մ**
Թուրքական հոսք	31,5 մլրդ խ/մ
Կապույտ հոսք	16 մլրդ խ/մ
Ադրբեջան	**մինչև 26 մլրդ խ/մ**
ՏԱՆԱՊ	16 մլրդ խ/մ
Բաքու-Թբիլիսի-Էրզրում	մինչև 10 մլրդ խ/մ
Իրան Թավրիզ-Անկարա	**14 մլրդ խ/մ**

[43] "Understanding the Energy Drivers of Turkey's Foreign Policy", by Francesco Siccardi, Published on February 28, 2024, https://carnegieendowment.org/research/2024/02/understanding-the-energy-drivers-of-turkeys-foreign-policy?lang=en&center=europe (այցելվել է 13.10.2023թ.):

[44] "Турция — потенциальный энергетический хаб для Европы?", от Cosmin Pacuraru | Мар 26, 2024, https://karadeniz-press.ro/ru/турция-потенциальный-энергетически/ (այցելվել է 13.10.2023թ.), "Volume of liquefied natural gas (LNG) imported into Turkey from 2014 to 2023", Statista, 2024, https://www.statista.com/statistics/900226/turkey-liquefied-natural-gas-import-volume/ (այցելվել է 13.10.2023թ.):

Ընդհանուր խողովակային հզորությունը	**87,5 մլրդ խ/մ**
Հեղուկ բնական գազի 2023թ. ներմուծումը	**15 մլրդ խ/մ**
Ընդամենը	**102,5 մլրդ խ/մ**

Այսինքն՝ բնական գազի ներմուծման՝ Թուրքիայի ընդհանուր ներուժը կազմում է ավելի քան 100 մլրդ խ/մ, այնինչ վերջինիս սպառումը կազմում է տարեկան շուրջ 50-55 մլրդ խ/մ: Փաստորեն, Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա հնարավոր է տարեկան ուղղել շուրջ 45-50 մլրդ խ/մ գազ՝ համապատասխան խողովակաշարերի առկայության պարագայում: Ավելին, վերջին տարիներին Թուրքիայում գազի մի քանի խոշոր հանքավայրեր են հայտնաբերվել, որոնց ընդհանուր ապացուցված պաշարը կազմում է մոտ 700 մլրդ խ/մ: Դրանցից ամենախոշորը «Սաքարիա» հանքավայրն է Սև ծովում՝ մոտ 500 մլրդ խ/մ պաշարով, որտեղ արդյունահանումը սկսվել է 2023-ին: Ընդհանուր առմամբ 2023-ին Թուրքիան արդյունահանել է շուրջ 800 մլն խ/մ գազ, իսկ մինչև 2028թ. նախատեսում է բնական գազի արդյունահանման ծավալները հասցնել 15 մլրդ խ/մ-ի[45]: Սա հնարավորություն կտա սեփական ռեսուրսների հաշվին ապահովել Թուրքիայում գազի պահանջարկի գրեթե 30 տոկոսը, ինչն իր հերթին կազատի ներկրվող գազի լրացուցիչ ծավալներ՝ դեպի Եվրոպա արտահանելու համար: Այս հարցում հիմնական խոչընդոտը կարող է լինել Թուրքիայից դեպի հարավ-արևելյան Եվրոպա գազատար խողովակաշարերի ներկայիս գերծանրաբեռնվածությունը և նոր խողովակաշարերի կառուցման համար ներդրումների անբավարարությունը, ինչը մասնակիորեն հնարավոր է փոխհատուցել ՀԲԳ արտահանման ենթակառուցվածքների ձևավորմամբ[46]:

2023-ին Թուրքիայի տարածքով դեպի ԵՄ բնական գազի արտահանումը հիմնականում իրականացվել է երկու ուղղությամբ՝ Ռուսական գազը՝ Թուրքական հոսքի միջոցով՝ շուրջ 13,6 մլրդ խ/մ, Ադրբեջանական գազը՝ Հարավային գազային միջանցքի միջոցով՝ 12,4 մլրդ խ/մ[47]: Այսինքն՝ ընդհանուր առմամբ 2023-ին Թուրքիայի տարածքով դեպի ԵՄ բնական գազի խողովակային տարանցումը

[45] "Турция подтверждает планы увеличить объем добычи газа в Черном море до 10 млн м3/сутки … FPSO поможет …", ИА Neftegaz.RU, Анкара, 17 авг, https://neftegaz.ru/news/dobycha/850236-turtsiya-planiruet-uvelichit-obem-dobychi-gaza-v-chernom-more-do-10-mln-kubometrov-v-den/#:~:text=%D0%9A%20%D0%B8%D1%8E%D0%BB%D1%8E%202024%20%D0%B3.,%D0%9A%202028%20%D0%B3 (այցելվել է 13.10.2023թ.):

[46] "Турецкий хаб даст зеленый свет российскому газу", Александр Амирагян, интервью РИА Новости, 22 февраля 2024, https://ria.ru/20240222/amiragyan-1928697436.html (այցելվել է 13.10.2023թ.):

[47] "European natural gas imports", This dataset aggregates daily data on European natural gas import flows and storage levels, BRUEGEL, Georg Zachmann, Ben McWilliams, Ugnė Keliauskaitė, Giovanni Sgaravatti, 10 October 2024, https://www.bruegel.org/dataset/european-natural-gas-imports (այցելվել է 13.10.2024թ.):

կազմել է շուրջ 26 մլրդ խ/մ, ինչը նշանակում է, որ առկա է այդ ծավալը կրկնապատկելու հնարավություն:

Սա հատկապես կարող է արդիական դառնալ՝ ուկրաինական տրանզիտի փակման պարագայում: Ներկայումս ռուսական խողովակային գազի գրեթե կեսը դեպի ԵՄ է ուղղվում Ուկրաինայի տարածքով, մյուս կեսը՝ Թուրքիայի տարածքով: Օրինակ՝ 2024-ի առաջին կիսամյակում ԵՄ-ն ՌԴ-ից ներմուծվող բնական գազի ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացրել է շուրջ 26%-ով (26.5 մլրդ խ/մ), որից շուրջ 8,1 մլրդ խ/մ՝ Ուկրաինայի տարածքով, 7,8 մլրդ խ/մ՝ Թուրքիայի տարածքով[48]: ՌԴ և Ուկրաինայի միջև տարանցման պայմանագրի ժամկետը լրանում է 2024թ. ավարտին, իսկ այն երկարաձգելու շահագրգռվածություն կողմերը չեն ցուցաբերում: Սա նշանակում է, որ արդեն իսկ 2025-ին Թուրքիան կարող է դառնալ ԵՄ-ին ռուսական խողովակային բնական գազ մատակարարող միակ երկիրը[49]:



[50]

[48] "European natural gas imports", This dataset aggregates daily data on European natural gas import flows and storage levels, BRUEGEL, Georg Zachmann, Ben McWilliams, Ugnė Keliauskaitė, Giovanni Sgaravatti, 10 October 2024, https://www.bruegel.org/dataset/european-natural-gas-imports (այցելվել է 13.10.2024թ.):

[49] "Gazprom in 2023: exports to Europe stabilise, China's importance grows", Filip Rudnik, 2024-02-02, https://www.osw.waw.pl/en/publikacje/analyses/2024-02-02/gazprom-2023-exports-to-europe-stabilise-chinas-importance-grows (այցելվել է 13.10.2023թ.), "Поставки российского газа в ЕС по «Турецкому потоку» выросли почти на 40%", Василий Милькин, 07 мая,2024, https://www.vedomosti.ru/business/articles/2024/05/07/1035844-postavki-rossiiskogo-gaza-v-es-po-turetskomu-potoku-virosli (այցելվել է 13.10.2023թ.):

[50] "European natural gas imports", This dataset aggregates daily data on European natural gas import flows and storage levels, BRUEGEL, Georg Zachmann, Ben McWilliams, Ugnė Keliauskaitė, Giovanni

Փաստորեն, Թուրքիան արդեն իսկ հանդիսանում է կարևոր հանգույց՝ դեպի Եվրոպա բնական գազի մատակարարման հարցում: Վերջին տարիներին, հատկապես Հարավային գազային միջանցքի շահագործումից և ուկրաինական ճգնաժամից հետո ոչ միայն ադրբեջանական գազի մասնաբաժինն է ավելացել ԵՄ ներմուծման մեջ, այլև մեծացել է Թուրքիայի տարածքով ռուսական գազի մատակարարման մասնաբաժինը՝ այլ ուղղություններով էական կրճատումների պատճառով: «Բրյուգելի» հրապարակած տվյալների համաձայն՝ ստացվում է, որ ԵՄ-ի բնական գազի ներմուծման 8%-ը 2023-ին կախված է եղել թուրքական տրանզիտից, ինչը ոչ կրիտիկական, սակայն զգալի կախվածություն է թուրքական գործոնից՝ դրանից բխող քաղաքական հետևանքներով:[51]



Ավելին, եթե անտեսենք բնական գազի ներմուծման եվրոպական աղբյուրները՝ Նորվեգիան և Մեծ Բրիտանիան, ապա 2023թ. Թուրքիայի տարածքով է ներմուծվել ԵՄ մտնող ոչ եվրոպական գազի 12,2%-ը (Թուրքական հոսք՝ 6.4%, Ադրբեջան՝ 5.8%), իսկ 2024թ. առաջին կիսամյակում՝ շուրջ 15%-ը: Եթե Թուրքիայից դեպի Եվրոպա գազատար խողովակաշարերի ընդլայնման արդյունքում հնարավոր լինի կրկնապատկել Թուրքիայի տարածքով բնական գազի տարանցումը դեպի Եվրոպա, թուրքական տրանզիտը մոտ 20-25 տոկոս

Sgaravatti, 10 October 2024, https://www.bruegel.org/dataset/european-natural-gas-imports (այցելվել է 13.10.2024թ.):

[51] "European natural gas imports", This dataset aggregates daily data on European natural gas import flows and storage levels, BRUEGEL, Georg Zachmann, Ben McWilliams, Ugnė Keliauskaitė, Giovanni Sgaravatti, 10 October 2024, https://www.bruegel.org/dataset/european-natural-gas-imports (այցելվել է 13.10.2024թ.):

մասնաբաժնով կարող է որոշիչ դեր խաղալ գազի եվրոպական շուկայում, այդ թվում՝ գնային քաղաքականության տեսանկյունից:

Ընդ որում, ուշագրավ է, որ Թուրքիան իր հերթին վերջին տարիներին ձգտում է դիվերսիֆիկացնել բնական գազի ներմուծման սեփական աղբյուրները: Այսպես, 2023թ. Թուրքիան ներմուծել է շուրջ 50 մլրդ խ/մ գազ, որի շուրջ 42%-ը՝ Ռուսաստանից, 20%-ը՝ Ադրբեջանից, 12%-ը՝ Ալժիրից, 11%-ը՝ Իրանից, 8%-ը՝ ԱՄՆ-ից[52]: Ուշագրավ է, որ, օրինակ, ՌԴ-ից ներմուծման և տարանցման ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 35 մլրդ խ/մ, այնինչ ներմուծման միայն խողովակային ներուժն, ինչպես նշվեց, կազմում է 47,5 մլրդ խ/մ: Իրանի պարագայում ներմուծումը կազմել է 5,4 մլրդ խ/մ, մինչդեռ Թավրիզ-Անկարա խողովակի հզորությունը կազմում է տարեկան 14 մլրդ խ/մ: Ադրբեջանի պարագայում առկա խողովակաշարերն օգտագործվել են իրենց հզորության գրեթե ողջ ծավալով:



[53]

Նավթի ներմուծման պարագայում իրավիճակն առավել ուշագրավ է: 2023-ին Թուրքիան ներմուծել է շուրջ 49 մլն տոննա նավթ և նավթամթերք (շուրջ 31 մլն տոննա հում նավթ և 18 մլն տոննա նավթամթերք): Ներմուծման 51%-ը՝ շուրջ 25 մլն տոննա, բաժին է ընկել Ռուսաստանին, շուրջ 20%-ը՝ Իրաքին, 12%-ը՝ Ղազախստանին: Համեմատության համար նշենք, որ ուկրաինական

[52] "NATURAL GAS MARKET 2023 SECTOR REPORT", REPUBLIC OF TÜRKİYE ENERGY MARKET REGULATORY AUTHORITY, Strategy Development Department, ANKARA, 2024, https://www.epdk.gov.tr/Detay/Icerik/3-0-94/dogal-gazyillik-sektor-raporu (այցելվել է 13.10.2023թ.):
[53] "NATURAL GAS MARKET 2023 SECTOR REPORT", REPUBLIC OF TÜRKİYE ENERGY MARKET REGULATORY AUTHORITY, Strategy Development Department, ANKARA, 2024, https://www.epdk.gov.tr/Detay/Icerik/3-0-94/dogal-gazyillik-sektor-raporu (այցելվել է 13.10.2023թ.):

պատերազմին նախորդող 2021-ին Թուրքիան Ռուսաստանից ներմուծել էր ընդամենը 10,7 մլն տոննա նավթ և նավթամթերք:



[54]

Միաժամանակ, 2023-ին Թուրքիան արտահանել է շուրջ 13,3 մլն տոննա նավթ և նավթամթերք, որի շուրջ 72%-ը դեպի Եվրոպա և ԱՄՆ՝ համապատասխանաբար 54 և 18 տոկոս: Փաստորեն, լինելով նավթ ներմուծող երկիր, Թուրքիան 2023-ին արտահանել է շուրջ 13,3 մլն տոննա նավթ, ինչը կազմում է Ռուսաստանից ներմուծած նավթի կեսից ավելին, իսկ Թուրքիայից արտահանված նավթի շոշափելի հատվածը՝ շուրջ 7 մլն տոննա, ուղղվել է դեպի Եվրոպա: Ընդ որում, այստեղ հաշվի չի առնվում խողովակաշարերով դեպի այլ երկրներ Թուրքիայի տարածքով տարանցվող նավթը. օրինակ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի միջոցով 2023-ին մատակարարվել է շուրջ 30 մլն տոննա՝ հիմնականում ադրբեջանական նավթ[55], որի էական հատվածն ուղղվել է դեպի Եվրոպա և Իսրայել[56]: Եվրոպացի մի շարք փորձագետներ թերահավատորեն են մոտենում Թուրքիայից Եվրոպա մատակարարվող նավթամթերքի վերաբերյալ Թուրքիայի կողմից ներկայացվող պաշտոնական տվյալներին և գտնում են, որ թուրքական կողմը սեփական կամ այլ երկրների բրենդի ներքո պարզապես

[54] "PETROLEUM MARKET ANNUAL REPORT 2023", T.R. THE ENERGY MARKET REGULATORY AUTHORITY, Department of Strategy Development, ANKARA, 2024, https://www.epdk.gov.tr/Detay/Icerik/3-0-107/yillik-sektor-raporu (այցելվել է 13.10.2023թ.):

[55] "Azerbaijan says oil exports via the BTC pipeline in 2023 rose by 1.6% y/y", Hellenic shipping news, 18.01.2024, https://www.hellenicshippingnews.com/azerbaijan-says-oil-exports-via-the-btc-pipeline-in-2023-rose-by-1-6-y-y/ (այցելվել է 13.10.2023թ.):

[56] "Crude oil export volume from Azerbaijan in 2023, by country", Statista, 2024, https://www.statista.com/statistics/1414048/azerbaijan-oil-export-destinations/ (այցելվել է 13.10.2023թ.):

քողարկում է պատժամիջոցների ներքո գտնվող ռուսական նավթամթերքը՝ այն անխափան հասցնելով եվրոպական շուկաներ[57]:

Ռուսաստանից նավթամթերքի արտահանումը դեպի տարբեր երկրներ և տարածաշրջաններ, 2023թ (տոկոս)



58

Ուշագրավ է, որ Թուրքիան հատկապես ավելացրել է ռուսական նավթամթերքի ներմուծումը. 2023-ին ռուսական նավթամթերքի արտահանման 18%-ն ուղղվել է դեպի Թուրքիա, որի էական հատվածը վերաարտահանվել է դեպի եվրոպական շուկաներ[59]:

Թուրքիայի էներգետիկ կախվածությունը ՌԴ-ից հսկայական է. ինչպես արդեն նշվեց, 2023-ին Թուրքիան ՌԴ-ից է ներկրել բնական գազի 42%-ը, նավթի

---

[57] "How Turkey became Putin's 'pit stop' for selling camouflaged fuel to the EU", By Victor Jack, Politico, May 15, 2024, https://www.politico.eu/article/how-turkey-become-vladimir-putin-pit-stop-sell-camouflage-fuel-eu/ (այցելվել է 13.10.2023թ.):

[58] "Country Analysis Brief:Russia", U.S. Energy Information Administration, U.S. Department of Energy,Washington, April 29, 2024, https://www.eia.gov/international/content/analysis/countries_long/Russia/pdf/russia.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

[59] "Путин загоняет Эрдогана в угол. Россия сделала всего три шага и Турция оказалась в безвыходном положении", 26 июня 2024, https://dzen.ru/a/Znu7zOt7cVccl__9 (այցելվել է 13.10.2023թ.):

և նավթամթերքի 51%-ը, ածխի շուրջ 70%-ը[60], ինչպես նաև ՌԴ-ն հանդիսանում է Թուրքիայի գլխավոր գործընկերը միջուկային էներգիայի ոլորտում: Հետևաբար, առանց ռուսական էներգակիրների և ՌԴ-ի հետ էներգետիկ ոլորտում սերտ համագործակցության՝ Եվրոպայի համար էներգետիկ հաբ դառնալու՝ Անկարայի հնարավորությունները շատ մշուշոտ են:

Երբ 2022թ. աշնանը ՌԴ նախագահն առաջին անգամ բարձրաձայնեց Թուրքիայում գազային հանգույց ձևավորելու նախաձեռնության մասին, երկուստեք խանդավառությունը մեծ էր, իսկ նախաձեռնությունը հայտնվեց միջազգային առաջատար լրատվամիջոցների գլխագրերում: 2023թ. սեպտեմբերին Սոչիում Պուտին-Էրդողան հանդիպումից հետո Թուրքիայի նախագահը հայտարարեց, որ նախատեսվում է Թուրքիայում ստեղծել գազի արտահանման ծրագրերի ֆինանսավորման կենտրոն՝ Համբուրգում և Լոնդոնում գործող համանման կենտրոնների օրինակով, որը պետք է ազդեցիկ դերակատարում ունենար ոչ միայն գնագոյացման, այլ առհասարակ գազի մատակարարումների հարցում:[61] Էրդողանի պատկերացմամբ Թուրքիայում ձևավորվող հանգույցը պետք է նախատեսվի ոչ միայն բնական գազի, այլև այլ էներգակիրների և բնական հանածոների առևտրի համար[62]:

Սակայն ռուսական նախաձեռնությունից 2 տարի անց դեռևս շարունակվում են բանակցությունները գազային հանգույցի տեխնիկական, ֆինանսական, կառավարչական պարամետրերի վերաբերյալ[63]: Նախաձեռնության ճակատագրի շուրջ անորոշությունն ավելացավ հատկապես 2023-ի փետրվարին Թուրքիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից հետո, ինչը Թուրքիայի իշխանություններին ստիպեց փոխել քաղաքական առաջնահերթությունները՝ հսկայական ռեսուրսներ ուղղելով երկրաշարժի հետևանքների վերացմանը. ըստ Համաշխարհային բանկի գնահատականի՝ երկրաշարժի հետևանքով ուղիղ վնասը կազմել է շուրջ 35 մլրդ դոլար, ինչը Թուրքիայի տնտեսության համար հսկայական բեռ է: Թուրք պաշտոնյաները սկսեցին հայտարարել, որ գազային հանգույցի ձևավորման

---

[60] "Поставки российского угля в Турцию взлетели", ЛЕНТА, Анатолий Акулов, 14 февраля 2024, https://lenta.ru/news/2024/02/14/postavki-rossiyskogo-uglya-v-turtsiyu-vzleteli/ (այցելվել է 13.10.2023թ.):

[61] "Что известно о проекте газового хаба в Турции",ТАСС, 5 сентября 2023, https://tass.ru/ekonomika/18660659 (այցելվել է 13.10.2023թ.):

[62] "Эрдоган: газовый хаб в Турции обеспечит поставки энергоносителей и ценообразование", ТАСС, СТАМБУЛ, 5 сентября 2023, https://tass.ru/ekonomika/18658919 (այցելվել է 13.10.2023թ.):

[63] "Стало известно о споре России и Турции из-за газового хаба", ЛЕНТА, 14 сентября 2023, https://lenta.ru/news/2023/09/14/hub/ (այցելվել է 13.10.2023թ.):

համար անհրաժեշտ ներդրումներ ստեղծված պայմաններում Անկարան չի կարող կատարել, ուստի ներդրումային բեռը Մոսկվան իր վրա պետք է վերցնի[64]:

Այս տարվա գարնանը Թուրքիայի էներգետիկայի նախարար Ալփարսլան Բայրաքթարը հայտարարեց, որ առաջիկա ամիսներին նախատեսվում է Ստամբուլում ստեղծել Ֆինանսական կենտրոն՝ Գազպրոմի մասնակցությամբ: Նախորդ տարվա վերջին ՌԴ փոխվարչապետ Ալեքսանդր Նովակը հայտարարել էր, որ Թուրքիայում գազային հանգույցի նախագծի մեկնարկը կարող է տրվել արդեն 2024թ. ընթացքում[65], իսկ այս տարվա ապրիլին Թուրքիայի խորհրդարանում օրենսդրական գործընթաց սկսվեց այս նպատակով:

Չնայած գազային հանգույցի շուրջ ֆորմալ գործընթացի ձգձգումներին՝ գործնականում, ինչպես նշվեց, Թուրքիան արդեն իսկ հանդիսանում է որպես որոշակի էներգետիկ հանգույց և միջնորդ ռուսական գազն ու նավթը Եվրոպային վաճառելու գործում: Այսպես, դեռևս 2022-ին, երբ ռուսական կողմը պահանջեց էներգակիրների համար վճարել ռուբլով, Բուլղարիան սկսեց ռուսական գազը գնել միջնորդավորված, այդ թվում՝ թուրքական թրեյդերների միջոցով: Նույն մեխանիզմն օգտագործում են Ռումինիան, Մոլդովան և բալկանյան որոշ երկրներ, իսկ ուկրաինական տրանզիտի խափանումը կարող է մեծացնել այս շրջանակը[66]: Թուրքիան նաև 2023-2024թթ. ՀԲԳ մատակարարման համաձայնագրեր է կնքել հարավարևելյան Եվրոպայի մի շարք երկրների հետ[67]: Ինչպես նշվեց, Թուրքիան նաև ակտիվորեն ԵՄ երկրներին է վերավաճառում ռուսական նավթամթերքը: Նավթի համաշխարհային առևտրի մոտ 3 տոկոսն ամեն տարի անցնում է թուրքական նեղուցներով (որտեղ գերակշռում է ռուսական նավթը), ինչը Թուրքիային բացառիկ տարանցիկ դերակատար է դարձնում նաև այս ուղղությամբ: Ուստի, այս իմաստով կարելի է պնդել, որ Թուրքիան արդեն իսկ հանդիսանում է էներգետիկ հանգույց ՌԴ և Եվրոպայի միջև:

Իրականում, թեև էներգետիկ հանգույց դառնալու հարցում ՌԴ և Թուրքիայի շահերը մի շարք ուղղություններով համընկնում են, այնուամենայնիվ գործընթացի տեխնիկական, կառավարչական և քաղաքական բաղադրիչների շուրջ կողմերի պատկերացումները խիստ տարբեր են: Թուրքիան, իհարկե ձգտում է

---

[64] “Нужны российские инвестиции. В Турции назвали условие строительства газового хаба”, ИА Neftegaz.RU, Москва, 6 мар, https://neftegaz.ru/news/transport-and-storage/772227-nuzhny-rossiyskie-investitsii-v-turtsii-nazvali-uslovie-stroitelstva-gazovogo-khaba/ (այցելվել է 13.10.2023թ.):

[65] “В газовый хаб закачивают ожидания”, Коммерсантъ, Андрей Загорский, 26.05.2024, https://www.kommersant.ru/doc/6727713 (այցելվել է 13.10.2023թ.):

[66] “В газовый хаб закачивают ожидания”, Коммерсантъ, Андрей Загорский, 26.05.2024, https://www.kommersant.ru/doc/6727713 (այցելվել է 13.10.2023թ.):

[67] “Understanding the Energy Drivers of Turkey’s Foreign Policy”, by Francesco Siccardi, Published on February 28, 2024, https://carnegieendowment.org/research/2024/02/understanding-the-energy-drivers-of-turkeys-foreign-policy?lang=en&center=europe (այցելվել է 13.10.2023թ.):

առավելագույնս օգտվել ուկրաինական ճգնաժամի արդյունքում ի հայտ եկած հնարավորություններից, քանի որ ՌԴ և ԵՄ միջև էներգետիկ միջնորդի դերը վերջինիս հնարավորություն է տալիս մի կողմից ապահովել սեփական էներգետիկ անվտանգությունը՝ ՌԴ և մյուս մատակարարների հետ էներգակիրների գնի հարցում ստանալով բանակցային առավելություն, մյուս կողմից վերջինիս տարանցիկ կարևորությունը ԵՄ-ի համար մեծացնում է նաև Անկարայի քաղաքական կշիռը:

Թուրքիայում էներգետիկ հաբ ձևավորելու ռուսական առաջարկը ենթադրում էր առաջին հերթին ռուսական գազը դեպի Եվրոպա Թուրքիայի տարածքով տարանցման լոգիստիկ հնարավորությունների ստեղծում: Մեծ հաշվով, ռուսական առաջարկը ենթադրում էր, որ Թուրքիայում պարզապես ձևավորվի հարթակ, որտեղ հանդիպեն Գազպրոմն ու եվրոպական շահառուները և սահմանեն գազի եվրոպական շուկայում խաղի կանոնները, այնինչ Անկարային վերապահվելու էր պարզապես տարանցիկ դերակատարություն[68]:

Ակնհայտ է, որ Անկարայի պատկերացումներն այս հարցում մի փոքր այլ են. Թուրքիան ձգտում է պարզապես տարանցիկ և լոգիստիկ կենտրոնի փոխարեն դառնալ Եվրոպայի էներգետիկ շուկայում որոշումների կայացման կարևոր գործոն՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով այս հարցում կախվածությունը Մոսկվայից[69]: Թուրքիայի շահերից է բխում, որ ռուսական և եվրոպական կողմերի միջև գործարքներն իրականացվեն թուրքական ընկերությունների միջնորդությամբ և մասնակցությամբ, այսինքն՝ թուրքական թրեյդերները պետք է գնեն ռուսական գազը և այն վերավաճառեն եվրոպացիներին՝ այսպիսով ապահովելով երաշխավորված եկամուտ և կարևոր ազդեցություն երկու կողմերի նկատմամբ: Այս մեխանիզմը Թուրքիային հնարավորություն կտար նաև շահեկան դիրքեր ձեռք բերել սեփական կարիքների համար ռուսական գազի ներկրման շուրջ բանակցություններում: Բացի այդ, Թուրքիան ձգտում է հնարավորինս քիչ շեշտադրել ձևավորվող հանգույցում ռուսական էներգակիրների գերակայությունը՝ այն ներկայացնելով ավելի շուտ որպես միջազգային հանգույց: Մեծ հաշվով ներկայումս գործընթացը տեղի է ունենում հենց այս սցենարով, ուստի ստեղծված

[68] "В газовый хаб закачивают ожидания", Коммерсантъ, Андрей Загорский, 26.05.2024, https://www.kommersant.ru/doc/6727713 (այցելվել է 13.10.2023թ.):

[69] "Turkey can become an energy hub—but not by going all-in on Russian gas", By Yevgeniya Gaber, Atlantic Council, December 7, 2022 https://www.atlanticcouncil.org/blogs/turkeysource/turkey-can-become-an-energy-hub-but-not-by-going-all-in-on-russian-gas/ (այցելվել է 13.10.2023թ.), "Energy hub: A new door opens for Türkiye", by Nagehan Alçi, Dec 20, 2022, https://www.dailysabah.com/opinion/columns/energy-hub-a-new-door-opens-for-turkiye (այցելվել է 13.10.2023թ.):

ստատուս քվոն ինչ-որ առումով ձեռնտու է Անկարային, թեև ոչ այն մասշտաբով, որն ի սկզբանե ակնկալում էին երկու կողմերը[70]:

Հատկանշական է, որ ըստ փորձագիտական գնահատականների, Թուրքիայի տարածքով ռուսական գազի ներմուծման ավելացման գաղափարը ձեռնտու է բոլոր կողմերին, այդ թվում՝ ԵՄ-ին և ՌԴ-ին: Այս եղանակով ԵՄ երկրները շարունակում են ձեռք բերել համեմատաբար էժան ռուսական գազ, սակայն մեկ կարևոր առանձնահատկությամբ, որ այս մեխանիզմը չի ենթադրում ուղիղ կոնտակտ Գազպրոմի և ԵՄ ներկայացուցիչների միջև, ինչը կարող է բացառել քաղաքական պայմանների առաջադրումը: Տեխնիկապես սա ենթադրում է, որ Թուրքական հաբը ձեռք է բերում բնական գազ Ռուսաստանից և ոչ միայն (օրինակ՝ ադրբեջանական, իրանական, ղազախական), իսկ եվրոպական երկրները այն գնում են առանց կոնկրետ վաճառողի հետ անմիջական առնչության[71]: Փաստորեն, Եվրոպան ստանում է էժան գազ՝ պահպանելով պատժամիջոցների քաղաքական շղարշը, Թուրքիան ստանում է կարևոր գործիքակազմ ՌԴ և այլ ներմուծողների հետ գազի գների շուրջ բանակցություններում, Ռուսաստանը շարունակում է եկամուտներ ստանալ ԵՄ-ին վաճառվող գազից, քանի դեռ չի կարողացել էներգակիրների արտահանումն ամբողջությամբ վերաուղղել դեպի արևելյան շուկաներ[72]:

Բացի այդ, էներգետիկան և էներգետիկ անկախությունը կարևոր գործիք են նաև Թուրքիայի ներքաղաքական կյանքում: Օրինակ՝ 2023-ին Թուրքիայում ընտրությունների նախօրեին 2 ամենախոշոր իրադարձությունները էներգետիկ ոլորտում՝ գազի արդյունահանման մեկնարկը սևծովյան «Սաքարիա» հանքավայրում և «Աքկույու» ատոմակայանի համար միջուկային վառելիքի առաջին խմբաքանակի առաքումը Էրդողանը լիարժեք օգտագործեց իր նախընտրական քարոզարշավում՝ ընդգծելով ոլորտում իր կառավարության հաջողությունները[73]:

Չնայած Թուրքիայում էներգետիկ հանգույց ձևավորելու համար վերոհիշյալ բարենպաստ պայմաններին ու նախադրյալներին, առկա են նաև որոշակի

---

[70] "Интересы Москвы и Анкары по газовому хабу в Турции совпадают не во всем", Сергей Тихонов, 11.12.2023, https://rg.ru/2023/12/11/po-zovu-trub.html (այցելվել է 13.10.2023թ.):
[71] "Турецкий хаб даст зеленый свет российскому газу", Александр Амирагян, интервью РИА Новости, 22 февраля 2024, https://ria.ru/20240222/amiragyan-1928697436.html (այցելվել է 13.10.2023թ.):
[72] "Интересы Москвы и Анкары по газовому хабу в Турции совпадают не во всем", Сергей Тихонов, 11.12.2023, https://rg.ru/2023/12/11/po-zovu-trub.html (այցելվել է 13.10.2023թ.), «Էներգետիկ ճգնաժամը Եվրոպայում և ադրբեջանական գազի գործոնը», «Լույս» հիմնադրամ, 20.12.2022թ., https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=333 (այցելվել է 13.10.2023թ.):
[73] "Understanding the Energy Drivers of Turkey's Foreign Policy", by Francesco Siccardi, Published on February 28, 2024, https://carnegieendowment.org/research/2024/02/understanding-the-energy-drivers-of-turkeys-foreign-policy?lang=en&center=europe (այցելվել է 13.10.2023թ.):

խանգարող հանգամանքներ[74], առանց որոնց ուսումնասիրության անհնարին է լիարժեք պատկերացում կազմել էներգետիկ հաբ դառնալու՝ Թուրքիայի հնարավորությունների մասին:

- Առաջին խոչընդոտը, ինչպես նշվեց, Թուրքիայից դեպի ԵՄ գազի արտահանման ենթակառուցվածքների սահմանափակ կարողություններն են, ինչպես նաև դրանց ընդլայնման համար անհրաժեշտ ներդրումների բացակայությունը:
- Վերջին շրջանում Եվրոպայում քաղաքական և փորձագիտական շրջանակները հաճախ են ընդգծում Թուրքիայի կողմից «էներգակիրների լվացման» մեխանիզմի օգտագործումը, ինչը համարում են ԵՄ պատժամիջոցային քաղաքականությանը հակասող և անընդունելի: Ըստ վերջիններիս գնահատականների՝ Թուրքիան պարզապես խառնում է ռուսական գազը և այլ էներգառեսուրսներ ադրբեջանական, իրանական էներգակիրների հետ և վերաբրենդավորված պրոդուկտը մատակարարում է Եվրոպային՝ շրջանցելով հակառուսական պատժամիջոցները և Մոսկվայի համար ապահովելով հսկայական եկամուտներ[75]: Չի բացառվում, որ ԵՄ-ն առաջիկայում խստացնի Թուրքիայից ներմուծվող էներգակիրների նկատմամբ պահանջները:
- Անորոշ է Եվրոպայում բնական գազի և նավթի նկատմամբ երկարաժամկետ պահանջարկը, ինչը կասկածի տակ է դնում այս ոլորտում ներդրումների նպատակահարմարությունը: Նախքան վերջնական անցումը կանաչ էներգիային, ԵՄ-ն կարող է նախապատվությունը տալ բնական գազի երվրոպական արտադրողներին. օրինակ՝ ԵՄ-ում մեծ հույսեր են կապում Ռումինիայում բնական գազի «Նեպտուն» հանքավայրի շահագործման հետ, որի արդյունքում վերջինս կարող է դառնալ բնական գազի ԵՄ ամենախոշոր արդյունահանողը[76]: Հաշվի առնելով կանաչ էներգիային անցնելու ԵՄ ռազմավարությունը՝ Թուրքիան չի կարող վստահ լինել երկարաժամկետ հեռանկարում ԵՄ և իր արևելյան հարևանների միջև կարևոր էներգետիկ հանգույցի դերակատարության

[74] "Turkey's quest to become a regional energy hub: Challenges and opportunities", Aliaksandr Novikau, Jahja Muhasilović, October 2023, https://www.researchgate.net/publication/375093951_Turkey's_quest_to_become_a_regional_energy_hub_Challenges_and_opportunities (այցելվել է 13.10.2023թ.):

[75] "OIL, GAS, AND WAR: The Effect of Sanctions on the Russian Energy Industry", Atlantic Council, by Vladimir Milov, March 2024, https://www.atlanticcouncil.org/wp-content/uploads/2024/05/Oil-gas-and-war-Vladimir-Milov.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

[76] "Caspian contributions to energy security in Europe", JOHN ROBERTS AND JULIAN BOWDEN, Atlantic Council GLOBAL ENERGY CENTER, JULY 2024, https://www.atlanticcouncil.org/wp-content/uploads/2024/07/Caspian-contributions-to-energy-security-in-Europe.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

պահպանման հարցում. հետևաբար, այս ոլորտում Թուրքիայի քաղաքականությունը հիմնված է կարճաժամկետ և միջնաժամկետ շահերի հաշվարկի վրա:

- Նույն տրամաբանությամբ ռուսական էներգակիրների արտահանման վեկտորի տեղափոխումը դեպի արևելք երկարաժամկետ հեռանկարում նվազեցնում է եվրոպական էներգետիկ շուկայի կարևորությունը Մոսկվայի համար, ինչն իր հերթին կարող է բացասաբար ազդել Թուրքիայի տարանցիկ դերակատարության վրա:
- Ըստ միջազգային լրահոսի՝ Մոսկվայի և Անկարայի միջև առկա են հակասություններ գազային հանգույցի կառավարման, դրա տեխնիկական և քաղաքական բաղադրիչների մասով[77], ինչը թույլ չի տալիս լիարժեք օգտագործել Թուրքիայի տարանցիկ հնարավորությունները:

Բացի վերոհիշյալ հանգամանքներից, այս գործընթացում կարևոր խոչընդոտ կարող է դառնալ Թուրքիայի և Ռուսաստանի միջև հարաբերությունների որոշակի սառեցումը 2023-ին Թուրքիայում տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո: Չնայած նախընտրական շրջանում ռուսական կողմի քաղաքական աջակցությանը, վերընտրվելուց կարճ ժամանակ անց Էրդողանը հանդես եկավ մի շարք արտաքին քաղաքական նախաձեռնություններով, որոնք միտված էին ԱՄՆ և ԵՄ հետ մերձեցմանը և լրացուցիչ լարվածություն ստեղծեցին Մոսկվայի հետ հարաբերություններում[78]:

Նախ, Անկարան երկար ձգձգումից հետո 2023-ի հուլիսին ի վերջո հավանություն տվեց Շվեդիայի անդամակցությանը ՆԱՏՕ-ին: Այնուհետև որոշակի ռևերանսներ կատարեց Ուկրաինայի ուղղությամբ, այդ թվում՝ ազատ արձակելով ՌԴ կողմից գերեվարված և Թուրքիային արտահանձնված «Ազով» կազմակերպության անդամներին: Նույն ժամանակահատվածում Ռուսաստանը հրաժարվեց երկարացնել Թուրքիայի հետ ստորագրված «Հացահատիկի գործարքը»: Եվ չնայած սեպտեմբերին Էրդողանի Սոչի կատարած այցին և բանակցություններին, երկկողմ լարվածությունը շարունակում է պահպանվել[79]: ՌԴ նախագահը նույնիսկ հայտարարեց, որ հենց թուրքական ԱԹՍ-ներն Ուկրաինայի ձեռամբ օգտագործվում են Թուրքիայի գազ մատակարարող խողովակների վրա

[77] "Reuters узнал о разногласиях России и Турции из-за управления газовым хабом", Редакция Forbes, Катя Загвоздкина, 14 сентября 2023, https://www.forbes.ru/biznes/496498-reuters-uznal-o-raznoglasiah-rossii-i-turcii-iz-za-upravlenia-gazovym-habom (այցելվել է 13.10.2023թ.):

[78] "Путин загоняет Эрдогана в угол. Россия сделала всего три шага и Турция оказалась в безвыходном положении", 26 июня 2024, https://dzen.ru/a/Znu7zOt7cVccl__9 (այցելվել է 13.10.2023թ.):

[79] "Перспективы турецкого газового хаба: об итогах сочинских переговоров лидеров России и Турции", Флегонтов Никита Андреевич, 7 сентября 2023, https://russiancouncil.ru/blogs/NSO_MGIMO/perspektivy-turetskogo-gazovogo-khaba-ob-itogakh-sochinskikh-peregovor/ (այցելվել է 13.10.2023թ.):

հարձակման նպատակով[80]: Երկկողմ հարաբերություններում առկա կնճիռների մասին են վկայում նաև Անկարայի ստորագրությունը պրոուկրաինական «խաղաղության հռչակագրի» տակ, սահմանափակումները ռուսական «Միր» վճարային քարտերի համար Թուրքիայի տարածքում և այլն: Բացի այդ, ռուս փորձագետները նաև ընդգծում են ռուսական գազի համար Թուրքիայի կուտակած պարտքի խնդիրը, որը, ըստ տարբեր գնահատականների, կազմում է շուրջ 60 մլրդ դոլար, և որի վճարումն Անկարան պարբերաբար ձգձգում է[81]:

Ինչևէ, Թուրքիան ինքնին մեծ շուկա է ռուսական էներգակիրների ներմուծման համար և, հաշվի առնելով վերջինիս էներգետիկ կախվածությունը Մոսկվայից, ռուսական կողմի հետ երկարաժամկետ պայմանագրերը էներգետիկայի գրեթե բոլոր ոլորտներում, կարող ենք եզրակացնել, որ անկախ իր տրանզիտային կարգավիճակի հետագա ճակատագրից, Անկարան կշարունակի մնալ Եվրոպայում ռուսական էներգակիրների ամենամեծ սպառողը և էներգետիկ ոլորտում Մոսկվայի գլխավոր գործընկերը[82]: Միաժամանակ, Թուրքիան արդեն իսկ հանդիսանում է կարևոր էներգետիկ հաբ ոչ միայն ՌԴ և ԵՄ միջև, այլև Մերձավոր Արևելքից և Միջին Ասիայից դեպի ԵՄ էներգառեսուրսների մատակարարման հարցում ու ամենայն հավանականությամբ Անկարան իր այս կարգավիճակը կպահպանի[83], գուցե նաև որոշակիորեն կընդլայնի կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում:

---

[80] "Путин заявил о попытках атак на «Турецкий» и «Голубой» потоки", РБК, 04 сен 2023, https://www.rbc.ru/politics/04/09/2023/64f5e3199a79472078d31699 (այցելվել է 13.10.2023թ.):

[81] "Путин загоняет Эрдогана в угол. Россия сделала всего три шага и Турция оказалась в безвыходном положении", 26 июня 2024, https://dzen.ru/a/Znu7zOt7cVccl__9 (այցելվել է 13.10.2023թ.):

[82] "Russia's Gas Export Strategy: Adapting to the New Reality", Commentary by Anne-Sophie Corbeau & Tatiana Mitrova, Center on Global Energy Policy at Columbia University, School of International and Public Affairs, February 21, 2024, https://www.energypolicy.columbia.edu/publications/russias-gas-export-strategy-adapting-to-the-new-reality/ (այցելվել է 13.10.2023թ.):

[83] "Will a Turkish Gas Hub Solve Eurasia's Energy Troubles?" Publication: Eurasia Daily Monitor Volume: 20 Issue: 3, By: Nuray Alekberli-Museyibova, January 5, 2023, https://jamestown.org/program/will-a-turkish-gas-hub-solve-eurasias-energy-troubles/ (այցելվել է 13.10.2023թ.):

3. ԻՐԱՆԻ ՆՈՐ ԴԵՐԸ ՌԴ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵԿՏՈՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Եթե Թուրքիան արդեն իսկ որոշակիորեն ստանձնել է դեպի եվրոպական շուկա Ռուսաստանից և տարածաշրջանի այլ երկրներից էներգակիրների տարանցման համար էներգետիկ հաբի կարգավիճակը, ապա Իրանը հավակնում է դառնալ ոչ միայն դեպի արևելք և հարավ էներգակիրների տարանցման հանգույց, այլև առանցքային դեր ստանձնել այդ էներգակիրների արտադրության, վերամշակման, տարանցման և գնագոյացման հարցում: Պայմանականորեն, եթե Թուրքիան կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում հանդիսանալու է Եվրոպայի համար արևելյան էներգակիրների տարանցման հանգույց, ապա Իրանը ձգտում է երկարաժամկետ հեռանկարում դառնալ հենց արևելյան էներգետիկ շուկայի դարպասը, որտեղից պետք է իրանական, ռուսական և մերձավորարևելյան էներգակիրները ողողեն հնդկական և չինական շուկաները: Ընդ որում, բացի բարենպաստ աշխարհագրական դիրքից, Իրանն ունի նաև հարուստ ռեսուրսային բազա, որը Թեհրանին թույլ կտա դառնալ ոչ թե պարզապես տարանցիկ երկիր, այլ առանցքային խաղացող Ասիական տարածաշրջանի էներգետիկ շուկայում:

Ըստ «Բրիթիշ Փեթրոլիումի» 2020թ. տվյալների՝ Իրանում են գտնվում բնական գազի հաստատված համաշխարհային պաշարների շուրջ 17,1%-ը (32,1 տրլն խ/մ)[84], ինչպես նաև նավթի համաշխարհային պաշարների շուրջ 9,1%-ը (157.8 մլրդ բարել)[85], այնինչ 2023-ին Իրանն ապահովել է բնական գազի և նավթի համաշխարհային արդյունահանության համապատասխանաբար 6,2 և 4,7 տոկոսը[86]: Իրանում արդյունահանվող բնական գազի գերակշիռ մասը սպառվում է ներքին շուկայում. հատկանշական է, որ տիրապետելով բնական գազի հսկայական պաշարներ՝ Իրանը բնական գազի արտահանման շուկայում ավելի փոքր խաղացող է, քան, օրինակ, հարևան Ադրբեջանը՝ որի ռեսուրսային բազան շատ ավելի փոքր է: Այսինքն՝ ակնհայտ է, որ Իրանն ունի այս երկու կարևոր

[84] "Statistical Review of World Energy 2021", 70th edition, British Petroleum, 2022, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2021-natural-gas.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

[85] "Statistical Review of World Energy 2021", 70th edition, British Petroleum, 2022, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2021-oil.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

[86] "Statistical Review of World Energy", 73rd edition, The Energy Institute (EI), 2024, https://www.energyinst.org/__data/assets/pdf_file/0006/1542714/684_EI_Stat_Review_V16_DIGITAL.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

էներգակիրների, հատկապես բնական գազի արդյունահանման ծավալների ավելացման զգալի ներուժ, որն առայժմ լիարժեքորեն չի կարողանում օգտագործել:

Ինչպես նշվեց, 2023-ին Իրանն ապահովել է նավթի համաշխարհային արդյունահանության շուրջ 4,7%-ը (214.3 մլն տոննա) և բնական գազի համաշխարհային արդյունահանության 6,2%-ը (251,7 մլրդ խ/մ): Հատկանշական է, որ վերջին տարիներին Իրանում գազի և նավթի արդյունահանությունն աճի բավական բարձր տեմպ է գրանցվել. 2021-2023թթ. Իրանում նավթի արդյունահանության աճը կազմել է շուրջ 24 տոկոս, իսկ 2013-2023թթ. բնական գազի արդյունահանությունն ավելացել է շուրջ 60%-ով: Իրանական նավթը հիմնականում արտահանվում է ասիական, առավելապես՝ չինական շուկա, այնինչ բնական գազը արտահանվում է հարևան երկրներ՝ Հայաստան, Իրաք, Թուրքիա:



[87]

Վերջին տարիներին Ռուսաստանի արտաքին տնտեսական և էներգետիկ քաղաքականության վեկտորի փոփոխությունը դեպի արևելք Մոսկվային ստիպեց ավելի մեծ կարևորություն տալ տարածաշրջանում Իրանի տարանցիկ դերակատարությանը՝ ավելի շատ հետաքրքրություն ցուցաբերելով Հյուսիս-հարավ տրանսպորտային նախագծի, այդ թվում՝ դրա էներգետիկ բաղադրիչի նկատմամբ: Գեոպոլիտիկ և տարածաշրջանային մակարդակում մի շարք հարցերի շուրջ Մոսկվայի և Թեհրանի շահերի համընկնումը նպաստում է նաև այս ոլորտում

[87] "Statistical Review of World Energy", 73rd edition, The Energy Institute (EI), 2024, https://www.energyinst.org/__data/assets/pdf_file/0006/1542714/684_EI_Stat_Review_V16_DIGITAL.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

երկկողմ հարաբերությունների խորացմանը[88]: Արդյունքում ուկրաինական պատերազմի մեկնարկից կարճ ժամական անց երկու երկրները նախաձեռնեցին առաջին լուրջ քայլերը էներգետիկ համագործակցությունը նոր մակարդակի բարձրացնելու ուղղությամբ:

Էներգետիկ ոլորտում ՌԴ-Իրան համագործակցությունը երկարամյա պատմություն ունի: Իրանը Մերձավոր Արևելքի առաջին երկիրն է, որտեղ Ռուսաստանը ատոմակայան է կառուցել, ինչը փոխվստահության բարձր մակարդակի խորհրդանիշ է: Այն Իրանի համար ոչ միայն էներգետիկ անվտանգության կարևոր գործոն է, այլև կարևոր դեր է խաղում տարածաշրջանում Իրանի աշխարհաքաղաքական կշիռն ավելացնելու, առհասարակ Իրանում միջուկային տեխնոլոգիաների առաջխաղացման տեսանկյունից:

2021-2022թթ.՝ հատկապես ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո, ՌԴ-Իրան հարաբերություններում զգալի աշխուժացում նկատվեց: ՌԴ հետ հարաբերությունների խորացման ակտիվ ջատագովն էր Իրանի նախորդ նախագահ Հասան Ռոհանին՝ անշուշտ, Իրանի հոգևոր առաջնորդի աջակցությամբ և առաջնորդությամբ: Վերջինիս պաշտոնավարման շրջանում Ռուսաստանը դարձավ Իրանի տնտեսության գլխավոր օտարերկրյա ներդրողներից մեկը[89]: Այսպես, 2022-ի հուլիսին՝ ՌԴ նախագահի իրանյան այցի նախօրեին ռուսական «Գազպրոմը» և Իրանի ազգային նավթային ընկերությունը

[88] "В Иране заявили, что сотрудничество с Россией в энергетике является ответом на санкции", ТАСС, ДУБАЙ, 5 марта 2024, https://tass.ru/ekonomika/20155841 (այցելվել է 13.10.2023թ.):
[89] "Россия стала страной номер один по инвестициям в Иран", Илья Лакстыгал, Антон Козлов, 24 марта 2023, https://www.vedomosti.ru/economics/articles/2023/03/24/967929-rossiya-stala-stranoi-nomer-odin-po-investitsiyam-v-iran (այցելվել է 13.10.2023թ.):

40 մլրդ դոլար ընդհանուր արժեքով փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին, որով նախատեսվում էր տասնապատկել Իրանի էներգետիկ ոլորտում ռուսական ներդրումները[90]: Ըստ մամուլում տարածված տեղեկությունների՝ այդ հուշագրի շրջանակներում կողմերը նախատեսում են.

- Իրանում գազի և նավթի նոր հանքավայրերի համատեղ հետազոտում և շահագործում,
- բնական գազի և նավթամթերքի սվոփային (փոխանակման) գործարքների իրականացում,
- հեղուկ բնական գազի արտադրության համատեղ նախագծերի իրականացում,
- գազատար խողովակաշարերի կառուցում,
- համագործակցություն գիտատեխնիկական և տեխնոլոգիական ոլորտներում:[91]

Փորձագետների շրջանում հատկապես մեծ ուշադրության արժանացավ Իրանի և ՌԴ միջև բնական գազի սվոփային համագործակցության շուրջ պայմանավորվածությունը: 2022-ի նոյեմբերին առևտրատնտեսական համագործակցության հարցերով ռուս-իրանական միջկառավարական հանձնաժողովի նիստի արդյունքում ՌԴ փոխվարչապետ Ալեքսանդր Նովակը հայտարարեց, որ կողմերը ակտիվորեն քննարկում են գազի սվոփային մատակարարումների հարցը: Ավելի ուշ նա հայտարարեց, որ Ռուսաստանն ու Իրանը քննարկում են Իրանի հարավում գազի առևտրի էլեկտրոնային հարթակի ձևավորման հետ կապված հարցեր:

Նախնական շրջանում կանխատեսվում է, որ Ռուսաստանը կարող է տարեկան մինչև 10 մլրդ խ/մ գազ մատակարարել Իրանի հյուսիսային շրջաններ՝ Թուրքմենստանի, Ադրբեջանի տարածքով, փոխարենը իրանական գազը մատակարարելով այլ սպառողների՝ Պակիստան, Հնդկաստան և այլն[92]: Քննարկումները հատկապես ակտիվացան, երբ որոշում կայացվեց Կենտրոնական Ասիա-Կենտրոն(ՌԴ) գազատարի երկու խողովակաշարերից մեկով գազի տեղափոխումը կազմակերպել ռևերսիվ եղանակով՝ Ռուսաստանից դեպի Ղազախստան և Ուզբեկստան: Այս գազատարի խողովակաշարերից մեկը ձգվում

---

[90] "Iran, Russia Sign Energy Memorandum On Eve of Putin Trip", Iran International, Jul 19, 2022, https://www.iranintl.com/en/202207194766 (այցելվել է 13.10.2023թ.):

[91] "Россия и Иран обсудили актуальные вопросы энергетического сотрудничества", - ИА Neftegaz.RU, Санкт-Петербург, 27 фев 2023, https://neftegaz.ru/news/partnership/771502-rossiya-i-iran-obsudili-aktualnye-voprosy-energeticheskogo-sotrudnichestva/ (այցելվել է 13.10.2023թ.):

[92] "Досанкционного уровня поставок газа надо ждать не раньше 2030 года", Ольга Соловьева, Независимая газета, 01.07.2024 https://www.ng.ru/economics/2024-07-01/1_9039_gas.html (այցելվել է 13.10.2023թ.):

է մինչև Թուրքմենստանի հարավում գտնվող «Դովլեթաբադ» հանքավայր, որտեղից ներկայումս թուրքմենական գազը մատակարարվում է Իրանի հյուսիսային շրջաններ՝ Դովլեթաբադ-Խանգիրան խողովակաշարի միջոցով[93]:

Իրանը մեծ հույսեր է կապում դեպի Պակիստան (հեռանկարում՝ նաև Հնդկաստան) կառուցվող գազատար խողովակաշարի հետ, որի միջոցով կարող է մատակարարվել տարեկան մինչև 36,5 մլրդ խ/մ գազ: Թեև շինարարությունը պարբերաբար ձգձգվում է, սակայն դրա իրականացումը թույլ կտա լիարժեք օգտվել ռուսական գազի սվոփային մատակարարումների ընձեռած հնարավորությունից[94]:



[93] "Иран и Россия обсудили газовый хаб и дальнейшее сотрудничество", ИА Neftegaz.RU, Москва, 28 фев, https://neftegaz.ru/news/partnership/821115-d-oudzhi-i-a-novak-obsudili-gazovyy-khab-rasshirenie-sotrudnichestva-i-o-osvoenie-mestorozhdeniy-ira/ (այցելվել է 13.10.2023թ.):

[94] "Россия и Иран обсудили актуальные вопросы энергетического сотрудничества", - ИА Neftegaz.RU, Санкт-Петербург, 27 фев 2023, https://neftegaz.ru/news/partnership/771502-rossiya-i-iran-obsudili-aktualnye-voprosy-energeticheskogo-sotrudnichestva/ (այցելվել է 13.10.2023թ.):

Մյուս կողմից, ռուսական գազի սվոփային ներմուծումը, ինչպես նաև Իրանի տարածքում ՌԴ հետ համատեղ գազի արդյունահանման նոր նախագծերի իրականացումը Թեհրանին հնարավորություն կտա նաև զգալիորեն ավելացնել գազի արտահանումը դեպի Թուրքիա, Իրաք և տարածաշրջանի մյուս երկրներ: Միաժամանակ, հեղուկ բնական գազի արտադրության հնարավորությունների ստեղծումը կապահովի իրանական գազի մուտքը դեպի ասիական շուկաներ, առաջին հերթին՝ Հնդկաստան և Չինաստան:

Թեև խոսքը վերաբերում է սկզբնական շրջանում սվոփային եղանակով մինչև տարեկան 10 մլրդ խ/մ ռուսական գազի մատակարարմանը, սակայն երկու երկրների պաշտոնական շրջանակները պարբերաբար շրջանառում են ավելի մասշտաբային ծրագրեր: Օրինակ՝ Իրանի նավթի նախկին նախարար Ջավադ Օուջին կառավարության նիստերից մեկի ժամանակ նշել է Ռուսաստանից օրական մինչև 300 մլն խ/մ գազի ներմուծման հեռանկարի մասին, որը կազմում է տարեկան ավելի քան 100 մլրդ խ/մ: Ըստ նրա՝ Իրանը կարող է ռուսական գազը մեծ ծավալներով գնել բավականին մատչելի գնով, այնուհետև այն մատակարարել դեպի Իրաք, Թուրքիա, Պակիստան և այլ տարածաշրջանային շուկաներ[95]:

Ճիշտ է, շատ փորձագետներ անտրամաբանական են համարում, որ գազի նման խոշոր պահուստներ ունեցող Իրանը պետք է այսպիսի ծավալներով գազ ներմուծի ՌԴ-ից, սակայն այստեղ իրավիճակին պետք է նայել ավելի լայն համատեքստում: Իրանը չունի այն ֆինանսական ռեսուրսները, որոնք թույլ կտան հսկայական ներդրումներ կատարել խողովակաշարերի կառուցման և դեպի հնդկական, պակիստանյան և ասիական այլ շուկաներ հասանելիություն ձեռք բերելու համար: Եթե ՌԴ-ն ներկայումս սեփական էներգակիրների արտահանման համար պատրաստ է նման խոշոր ներդրումներ կատարել, ապա հետագայում Իրանին կմնա միայն զարգացնել սեփական արդյունահանությունը՝ օգտվելով արդեն իսկ առկա ենթակառուցվածքներից:

Ռուսաստանի և Իրանի միջև հնարավոր էներգետիկ դաշինքը այս երկուսին կդարձնի որոշիչ դերակատար էներգետիկ աշխարհաքաղաքականության համատեքստում: Միասին այս երկրները տիրապետում են բնական գազի հաստատված համաշխարհային պաշարների գրեթե 40 տոկոսին (շուրջ 70 տրլն խ/մ) և նավթի շուրջ 15 տոկոսին (շուրջ 270 մլրդ բարել)[96]: Եթե հաշվի առնենք այս երկուսի աշխարհաքաղաքական հակամարտությունը ԱՄՆ-ի հետ, որը նաև վերջին տարիներին գերակա դիրքեր է ձեռք բերել էներգակիրների արտահանման

[95] "«Газпром» поехал в Иран со своим самоваром", Фарид Исаев, обозреватель haqqin.az, 19 июля 2024, https://haqqin.az/news/322663 (այցելվել է 13.10.2023թ.):
[96] "Почему энергетический альянс Ирана и России нежелателен для Европы", Тихонов Сергей, 20.07.2022, https://rg.ru/2022/07/20/takaia-im-dostalas-dolia.html (այցելվել է 13.10.2023թ.):

միջազգային շուկայում, կարող ենք փաստել, որ ՌԴ-Իրան հնարավոր էներգետիկ դաշինքի նավթային ռեսուրսները մոտ 4 անգամ գերազանցում են ԱՄՆ-ի ռեսուրսները, իսկ բնական գազի ռեսուրսներով ԱՄՆ-ին գերազանցում են ավելի քան 5 անգամ[97]: Միաժամանակ, գազի և նավթի արդյունահանման ցուցանիշներով Իրանն ու ՌԴ-ն միասին զիջում են ԱՄՆ-ին[98], հետևաբար ջանքերի համատեղումը և ոլորտում համատեղ ներդրումները թույլ կտան ավելի արդյունավետ դարձնել այս ոլորտում մրցակցությունն իրենց գլխավոր աշխարհաքաղաքական հակառակորդի հետ:

Իրանը, ունենալով արևմտյան պատժամիջոցներին դիմակայելու երկարամյա փորձ, կարող է իր փորձով և հնարավորություններով որոշակիորեն օգնել ՌԴ-ին ադապտացվել ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրավիճակում էներգետիկ ոլորտում առաջացած խնդիրներին: Օրինակ՝ դեռ 2022թ. աշնանը երկու կողմերը պայմանավորվածություն էին ձեռք բերել Իրանից ՌԴ գազային տուրբինների մատակարարման հարցում, որի կարիքն առաջացել էր ՌԴ նկատմամբ աննախադեպ արևմտյան պատժամիջոցների հետևանքով: Ռուսական կապիտալը իր հերթին, ինչպես նշվեց, ներգրավվում է Իրանի էներգետիկ ենթակառուցվածքի արդիականացման գործում: Գազպրոմի և Իրանի ազգային նավթային ընկերության միջև 40 մլրդ դոլար հուշագրի շրջանակներում ռուսական կողմը նախատեսում է ներդրումներ կատարել «Քիշ» և «Հյուսիսային Փարս» գազի հանքավայրերի շահագործման ծրագրերում, ինչպես նաև մասնակցել «Հարավային Փարս» հանքավայրի շահագործմանը: Փորձագետները նշում են նաև ռուսական ընկերությունների կողմից Իրանում նավթի թվով 6 հանքավայրերի շահագործման և բնական գազի արտահանման խողովակաշարերի կառուցման ծրագրերին մասնակցելու պայմանավորվածության մասին[99]:

Երկարամյա արևմտյան պատժամիջոցները Իրանին տևական ժամանակ զրկել են իր հարուստ էներգետիկ ներուժից լիարժեքորեն օգտվելու հնարավորությունից, ուստի այս ոլորտում ՌԴ աջակցությունը կարող է Իրանի տնտեսությանը նոր լիցք հաղորդել: Հաշվի առնելով, որ Իրանի նավթագազային

---

[97] "Statistical Review of World Energy 2021", 70th edition, British Petroleum, 2022, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2021-natural-gas.pdf (այցելվել է 13.10.2023թ.), "Statistical Review of World Energy 2021", 70th edition, British Petroleum, 2022, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2021-oil.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

[98] "Statistical Review of World Energy", 73rd edition, The Energy Institute (EI), 2024, https://www.energyinst.org/__data/assets/pdf_file/0006/1542714/684_EI_Stat_Review_V16_DIGITAL.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

[99] "Особенности сотрудничества России с Ираном в энергетической сфере", Сергей Жильцов, Олег Никифоров, Независимая газета, 07.11.2022, https://www.ng.ru/ng_energiya/2022-11-07/14_8583_cooperation.html (այցելվել է 13.10.2023թ.):

ռեսուրսների զգալի մասը կուտակված է երկրի հարավային շրջաններում՝ ՌԴ հետ սվոփային համագործակցությունը տնտեսապես իրոք գրավիչ և արդարացված է թվում: Սակայն վերոհիշյալ բոլոր ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ են ժամանակ, ներդրումներ, ենթակառուցվածքներ և քաղաքական կայունություն: Այսինքն՝ ի տարբերություն Թուրքիայի, Իրանը էներգետիկ հանգույց դառնալու դեռ սաղմնային փուլում է գտնվում, և այդ նախագծի լիարժեք իրագործումը կախված է մի շարք, այդ թվում՝ աշխարհաքաղաքական գործոններից[100]:

Եթե Թուրքիան ԵՄ գազային հանգույցի համար ընտրել է նպաստավոր աշխարհագրական դիրք ունեցող Թրակիայի շրջանը, ապա Իրանում դիտարկում են Պարսից ծոցի առափնյա շրջանը, որը մի կողմից մոտ է Իրանի նավթագազային հանքավայրերին, մյուս կողմից այնտեղ առկա նավահանգստային ենթակառուցվածքները կարող են նպաստավոր դեր խաղալ դեպի արևելք մատակարարումների հարցում: Իրանի նավթի նախկին նախարար Ջավադ Օուջին, մասնավորապես, այս տարվա ամռանը նշել էր, որ գազային հանգույցը նախատեսվում է ստեղծել Բուշեհր նահանգի Ասալույե շրջանում: Ընդ որում, Իրանում գազային հանգույց ձևավորելու հարցում Թեհրանն ու Մոսկվան ակտիվ բանակցություններ են վարում նաև գազի հսկայական պաշարներ ունեցող մյուս տարածաշրջանային դերակատարների. առաջին հերթին՝ Թուրքմենստանի և Կատարի հետ:[101] Միջազգային մամուլում և փորձագիտական շրջանակներում վերջին տարիներին հաճախ են հանդիպում վերլուծություններ Իրանի, Ռուսաստանի, Թուրքմենստանի և Կատարի միջև գազային ՕՊԵԿ ստեղծելու ծրագրերի մասին, ինչն ուղեկցվում է կողմերի միջև ակտիվ բանակցություններով[102]:

Ռուսաստանը, Իրանը, Թուրքմենստանն ու Կատարը համատեղ տիրապետում են գազի համաշխարհային պաշարների շուրջ 60%-ին[103] և արդյունահանման շուրջ 30%-ին[104]: Ակնհայտ է, որ գազի արդյունահանման,

---

[100] "Турецкий хаб даст зеленый свет российскому газу", Зульфия Хамитова, Фонд «Центр стратегических разработок», 22 февраля 2024, https://www.csr.ru/ru/news/turetskiy-khab-dast-zelenyy-svet-rossiyskomu-gazu (այցելվել է 13.10.2023թ.):

[101] "В Иране сообщили о достижении договоренностей с Россией по энергетическому хабу", ТАСС, ДУБАЙ, 7 августа 2023, https://tass.ru/ekonomika/18462425 (այցելվել է 13.10.2023թ.):

[102] "Россия обсуждает создание аналога ОПЕК+", Юлия Кочкина, 21 июня 2023, https://ura.news/articles/1036286971 (այցելվել է 13.10.2023թ.):

[103] "Statistical Review of World Energy 2021", 70th edition, British Petroleum, 2022, https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2021-natural-gas.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

[104] "Statistical Review of World Energy", 73rd edition, The Energy Institute (EI), 2024, https://www.energyinst.org/__data/assets/pdf_file/0006/1542714/684_EI_Stat_Review_V16_DIGITAL.pdf (այցելվել է 13.10.2023թ.), «Էներգետիկ ճգնաժամը Եվրոպայում և ադրբեջանական գազի գործոնը», «Լույս» հիմնադրամ, 20.12.2022թ., https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=333 (այցելվել է 13.10.2023թ.):

տարանցման, ենթակառուցվածքների և գնային քաղաքականության հարցում այս երկրների համագործակցությունը կարող է, իրոք, այնպիսի ազդեցություն ունենալ գազի միջազգային շուկայի վրա, ինչպիսին ունենում են ՕՊԵԿ-ի որոշումները նավթի միջազգային շուկայի և գների վրա[105]: Ընդ որում, եթե այդ ենթակառուցվածքները և լոգիստիկ կարողությունները կենտրոնացվեն Իրանի հարավում, ապա տրամաբանորեն Իրանի դերը գազի միջազգային շուկայում շեշտակիորեն կավելանա: Այլ հարց է, թե աշխարհաքաղաքական և տնտեսական շահերի տեսանկյունից որքանով Թուրքմենստանն ու հատկապես Կատարը շահագրգռված կլինեն ՌԴ և Իրանի հետ փաստացի էներգետիկ դաշինք կազմելու հարցում: Մասնավորապես, թեև վերջին տարիներին ԱՄՆ-ը ՀԲԳ արտահանման միջազգային շուկայում նշանակալի մրցակից է դարձել Կատարի համար, սակայն վերջինս շարունակում է մնալ ոլորտի ամենաազդեցիկ դերակատարներից մեկը և մեծ հաշվով Կատարին բավարարում է առկա ստատուս-քվոն[106]:

Հատկանշական է, որ Նավթ արտահանող երկրների կազմակերպությունը (ՕՊԵԿ) 1960-ականներին նույնպես ստեղծվել է Իրանի, Իրաքի, Քուվեյթի, Սաուդյան Արաբիայի և Վենեսուելայի մասնակցությամբ՝ ԱՄՆ մոնոպոլիայի և գնային ճնշման դեմ պայքարելու նպատակով: Այժմ, հաշվի առնելով վերջին տարիներին ՀԲԳ արտահանման ոլորտում ԱՄՆ դիրքերի ամրապնդումը եվրոպական և ասիական շուկաներում, մի շարք փորձագետներ և բարձրաստիճան պաշտոնյաներ ուղղակի նշում են գազի ոլորտում ՌԴ և Իրանի առաջնորդությամբ ՕՊԵԿ-ի պրակտիկան կրկնօրինակելու անհրաժեշտության մասին: Իհարկե, հաշվի առնելով գազի շուկայի առանձնահատկությունները, առաջին հերթին կախվածությունը ֆիզիկական ենթակառուցվածքներից՝ գազատար խողովակաշարերից, ՕՊԵԿ-ի ուղղակի կրկնօրինակումն այս ոլորտում անիրատեսական է թվում: Դժվար թե գազ ներկրող երկրները հետաքրքրված լինեն գազային դաշինքի ձևավորման հարցում, քանի որ վերջիններիս շահերից է բխում գազի շուկայական գնի պահպանումը, այլ ոչ թե գնագոյացման հարցում արտահանողների թելադրանքը:

Մյուս կողմից, գազի արտահանման շուկայում ՀԳԲ մասնաբաժնի կանխատեսվող աճը կարող է շուկայում նոր իրավիճակ ստեղծել: Եթե ներկայումս բնական գազի արտահանման շուկայում ՀԲԳ և խողովակային գազի մասնաբաժինը 50/50 է, ապա կանխատեսվում է, որ 2030-ին ՀԳԲ մասնաբաժինը

[105] “Турецкий хаб даст зеленый свет российскому газу”, Александр Амирагян, интервью РИА Новости, 22 февраля 2024, https://ria.ru/20240222/amiragyan-1928697436.html (այցելվել է 13.10.2023թ.):

[106] “Турецкий хаб даст зеленый свет российскому газу”, Александр Амирагян, интервью РИА Новости, 22 февраля 2024, https://ria.ru/20240222/amiragyan-1928697436.html (այցելվել է 13.10.2023թ.):

կարող է հասնել 70%-ի: Բացի այդ, վերջին երկու ճգնաժամերը գազի միջազգային շուկայում՝ նախ կորոնաճգնաժամի շրջանում գների շեշտակի անկումը, այնուհետև 2021-2022թթ. դրանց ռեկորդային աճը ցնցեցին գազի միջազգային շուկան՝ հարվածելով նախ արտահանողներին, այնուհետև ներմուծող երկրներին: Նման ցնցումներից խուսափելու համար Գազ արտահանող երկրների համաժողովի հիմքի վրա ՕՊԵԿ-ի գազային ձևաչափի հիմնումը որոշ փորձագետներ համարում են օրինաչափ լուծում, որը կարող է կանխատեսելի իրավիճակ ստեղծել ինչպես արտահանողների, այնպես էլ ներմուծողների համար[107]: Ուկրաինական պատերազմից հետո այս գաղափարի քննարկումը հատկապես ակտիվացել է ռուսական շրջանակներում՝ հաշվի առնելով այն առավելությունը, որ Ռուսաստանը ստանում է ՕՊԵԿ+ շրջանակներում համագործակցությունից, որը վերջինիս հնարավորություն տվեց չնայած արևմտյան աննախադեպ պատժամիջոցներին՝ պահպանել նավթի վաճառքից ստացվող հսկայական եկամուտները[108]:

Գազային ՕՊԵԿ-ի գաղափարի առանցքում Ռուսաստանը դնում է բնական գազի արդյունահանման ոլորտում առանցքային դերակատարների հետ այնպիսի համակարգի ձևավորումը, որի շրջանակներում գազը վաճառվելու է ոչ թե դոլարով, այլ տարբեր արժույթներով, այդ թվում՝ ոսկով, յուանով, ազգային արժույթներով և

[107] "Создадут ли «газовую ОПЕК» Иран и Россия: мнения экспертов", Финансы Mail, 11 августа 2023, https://finance.mail.ru/2023-08-11/dva-polyusa-sily-sozdadut-li-gazovyy-kartel-iran-i-rossiya-57368205/ (այցելվել է 13.10.2023թ.):

[108] "Россия выдвинула идею создать аналог ОПЕК по твердым полезным ископаемым", Нефтькапитал, 10 января 2024, https://oilcapital.ru/news/2024-01-10/rossiya-vydvinula-ideyu-sozdat-analog-opek-po-tverdym-poleznym-iskopaemym-3148520 (այցելվել է 13.10.2023թ.):

այլն: Այս թեման պարբերաբար գտնվում է ՌԴ և Իրանի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի և Ասիական երկրների հետ վերջիններիս բանակցությունների առանցքում: ԱՄՆ դոլարից կախվածության թուլացումը կարևոր է ինչպես Թեհրանի, այնպես էլ Մոսկվայի համար՝ արևմտյան պատժամիջոցների ազդեցությունը նվազագույնի հասցնելու տեսանկյունից[109]:

Իրանի աշխարհագրական դիրքը նաև նպաստավոր է ռուսական նավթը դեպի ասիական շուկաներ, առաջին հերթին՝ Հնդկաստան մատակարարելու տեսանկյունից: Այս ոլորտում նույնպես Թեհրանի և Մոսկվայի համագործակցությունը հնարավոր է ինչպես սվոփային եղանակով, այնպես էլ Հյուսիս-հարավ նախագծի շրջանակներում ռուսական նավթի ուղղակի տարանցման եղանակով: Հատկանշական է, որ ուկրաինական պատերազմի մեկնարկից ի վեր Հնդկաստանը դարձել է ռուսական նավթի ամենախոշոր սպառողներից մեկը՝ որոշ ամիսների նույնիսկ գերազանցելով Չինաստանի ցուցանիշը[110]:

Ինչպես Իրանը, այնպես էլ Ռուսաստանը, գտնվելով արևմտյան պատժամիջոցների ներքո, արտահանվող նավթի զգալի հատվածն ուղղում են դեպի Չինաստան, ընդ որում՝ միջազգային գների համեմատ զգալի զեղչերով: Այս տեսանկյունից Թեհրանի և Մոսկվայի համագործակցությունը կարող է ամրապնդել երկու երկրների դիրքերը Չինաստանի հետ նավթի գնի շուրջ բանակցություններում: Հաշվի առնելով նավթի վերամշակման հարցում վերջին տարիներին Չինաստանի գրանցած հաջողությունները (մասնավորապես, Չինաստանի նավթաքիմիական արդյունաբերության արտադրական հզորությունը վերջին երկու տարվա ընթացքում աճել է ավելի շատ, քան մյուս բոլոր երկրները միասին վերցրած)՝ կարելի է ենթադրել, որ Չինաստանը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում շարունակելու է մնալ իրանական և ռուսական նավթի արտահանման գլխավոր շուկան[111], թեև Հնդկաստանը նույնպես ներմուծման աճի մեծ ներուժ ունի:

Ընդհանուր առմամբ, ռուս-իրանական էներգետիկ դաշինքի ձևավորումը և Իրանում էներգետիկ հանգույցի ստեղծումը իրատեսական նախագիծ է, սակայն ի տարբերություն թուրքական հաբի, որն արդեն իսկ գործուն դերակատարություն ունի դեպի Եվրոպա էներգակիրների մատակարարման հարցում, իրանական ծրագիրը, ինչպես վերևում նշվեց, դեռևս գտնվում է սաղմնային փուլում և դրա

---

[109] «Էներգետիկ ճգնաժամը Եվրոպայում և ադրբեջանական գազի գործոնը», «Լույս» հիմնադրամ, 20.12.2022թ., https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=333 (այցելվել է 13.10.2023թ.):
[110] “Индия рекордно закупается российской нефтью”, 22 августа 2024, https://haqqin.az/news/325567 (այցելվել է 13.10.2023թ.):
[111] “Как Китай, Россия и Иран крепят связи”, ИНОСМИ, перевод из “The Economist”, 2024.03.24, https://inosmi.ru/20240324/rossiya-268318942.html (այցելվել է 13.10.2023թ.):

ամբողջական իրագործումը կախված է մի շարք քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործոններից: Այն դեպքից հետո, երբ Իրանում ավիավթարի հետևանքով զոհվեցին նախկին նախագահ Ռաիսին և արտգործնախարար Աբդոլահյանը՝ ՌԴ հետ համագործակցության խորացման երկու ակտիվ ջատագովները, փորձագիտական շրջանակներում ի հայտ եկան տեսակետներ, որ այս միջադեպի հետևանքով ռուս-իրանական մերձեցումը, այդ թվում՝ էներգետիկ ոլորտում, կարող է անորոշությունների փուլ մտնել[112]: Իրանի արտահերթ ընտրություններում պահպանողական ուժերի պարտությունը և նոր նախագահի՝ Արևմուտքի հետ հարաբերությունները կարգավորելուն ուղղված ժեստերը ավելի ակտիվացրին այս քննարկումները:

Ինչևէ, ընտրություններում տարած հաղթանակից հետո նախագահ Մասուդ Փեզեշքյանը հայտարարեց, որ պատրաստ է պահպանել Ռուսաստանի հետ հարաբերություններում վերջին տարիների ձեռքբերումները, այդ թվում տրամաբանական հանգրվանի հասցնել Ռաիսիի վարչակազմի կողմից ավարտական փուլ հասցված՝ ՌԴ հետ երկարաժամկետ համագործակցության պայմանագրի շուրջ բանակցային գործընթացը: Պետք չէ մոռանալ, որ Իրանում արտաքին քաղաքական հարցերում որոշումների կայացման վրա նախագահի ազդեցությունը սահմանափակ է. նախագահը հաշվի է նստում հոգևոր առաջնորդի և Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հրամանատարության հետ: Հաշվի առնելով Իրան-Իսրայել հակամարտության սրումը, Իրանի, այդ թվում՝ էներգետիկ ենթակառուցվածքների նկատմամբ Իսրայելի սպառնալիքները, Արևմուտքի աջակցությունը Թել Ավիվին, կարող ենք ենթադրել, որ Թեհրանը կպահպանի ռազմավարական համագործակցությունը Ռուսաստանի հետ:

Հայտնի է, որ կողմերն ամբողջությամբ համաձայնեցրել են Համընդհանուր ռազմավարական համագործակցության պայմանագրի տեքստը, որն ըստ փորձագիտական գնահատականների, կարող է ստորագրվել Կազանում՝ ԲՐԻՔՍ-ի գագաթնաժողովի շրջանակներում[113]: Պաշտոնական հայտարարություններից կարող ենք ենթադրել, որ Իրանին ռուսական գազի մատակարարման շուրջ բանակցությունները շարունակվում են նաև Իրանում տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո: Սեպտեմբերին ՌԴ նախագահը հայտարարել է, որ Իրանը Ռուսաստանին խնդրում է գազ մատակարարել, ինչը, ըստ նրա, շատ իրատեսական ծրագիր է: Ընդ որում, ՌԴ նախագահը ընդգծել է

---

[112] "Iran's election may change the direction of its relations with Russia", Nikolay Kozhanov, Published 28 June 2024, https://www.chathamhouse.org/2024/06/irans-election-may-change-direction-its-relations-russia (այցելվել է 13.10.2023թ.):

[113] "Путин распорядился подписать договор о стратегическом партнерстве между РФ и Ираном", INTERFAX.RU, Москва, 18 сентября 2024, https://www.interfax.ru/russia/982686 (այցելվել է 13.10.2023թ.):

Իրանի հարմար աշխարհագրական դիրքը և Իրանի հարևան երկրներում բնական գազի հսկայական պահանջարկը[114]: Նոյեմբերի 11-ին Պուտին-Փեզեշքյան առաջին հանդիպման ժամանակ երկու առաջնորդները նույնպես քննարկել են էներգետիկ ոլորտում համագործակցությանը վերաբերող հարցեր[115]:

Ըստ էության, Իրանում էներգետիկ հանգույցի ձևավորումը և ռուս-իրանական էներգետիկ համագործակցության խորացումը մեծ հեռանկարներ ունեցող նախագիծ է, որի իրագործումը կարող է ամբողջովին փոխել տարածաշրջանի էներգետիկ քարտեզը: Իհարկե, աշխարհաքաղաքական գործընթացները կարող են այս գործընթացը խոչընդոտել, հետաձգել: Մասնավորապես Իսրայելի կողմից Իրանի նավթային ենթակառուցվածքների հնարավոր թիրախավորումը կարող է լուրջ խնդիրներ ստեղծել ոչ միայն իրանական էներգետիկայի համար, այլև առհասարակ ցնցել համաշխարհային էներգետիկ շուկան: Սակայն միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում Ռուսաստանի և Իրանի միջև էներգետիկ համագործակցությունը մեծ ներուժ ունի՝ հիմնված փոխադարձաբար համադրելի աշխարհաքաղաքական և տնտեսական շահերի վրա:

Իրանում և Թուրքիայում էներգետիկ հանգույցների ձևավորումը, անշուշտ, իր ազդեցությունն է ունենալու ողջ տարածաշրջանի, այդ թվում՝ Հարավային Կովկասի վրա, ուստի տարածաշրջանային երկրները օր առաջ պետք է հաշվարկեն բոլոր հնարավոր զարգացումները և լավագույնս առաջ մղեն սեփական էներգետիկ շահերը:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես Իրանում, այնպես էլ Թուրքիայում էներգետիկ հանգույցների ձևավորումը, անշուշտ, իր ազդեցությունն է ունենալու Հարավային Կովկասի էներգետիկ աշխարհաքաղաքականության վրա: Մեր տարածաշրջանը կարևոր հանգույցային նշանակություն ունի էներգակիրների ինչպես արևելք-արևմուտք, այնպես էլ հյուսիս-հարավ ուղղություններով տարանցման համար, ուստի էներգետիկ ոլորտում թե՛ Իրանի, թե՛ Թուրքիայի դերակատարության մեծացումը նպաստելու է նաև Հարավային Կովկասի տարանցիկ ներուժի ավելացմանը:

Հատկանշական է, որ էներգետիկ ոլորտում ՌԴ-Իրան համագործակցության ակտիվացմանը զուգահեռ, որոշ, այդ թվում՝ հայաստանյան փորձագետներ սկսեցին ակտիվորեն «արձանագրել» թուրքական էներգետիկ հաբի ձախողումը և

[114] "Путин заявил, что Иран давно просит о поставках газа из РФ", /ТАСС/, ВЛАДИВОСТОК, 5 сентября 2024, https://tass.ru/ekonomika/21780065 (այցելվել է 13.10.2023թ.):

[115] "Президент Ирана обсудил с Путиным энергетику и конфликты на Ближнем Востоке", INTERFAX.RU, Москва, 12 октября 2024, https://www.interfax.ru/world/986439 (այցելվել է 13.10.2023թ.):

փոխարենը Իրանում այլընտրանքային հանգույցի ձևավորումը[116]: Մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև Իրանը ռուսական և մերձավորարևելյան էներգակիրները դեպի Ասիական շուկաներ արտահանելու մեծ ներուժ ունի, սակայն այն չի կարող փոխարինել Թուրքիային դեպի Եվրոպա էներգակիրների արտահանման հանգույցի արդեն իսկ փաստացի գոյություն ունեցող կարգավիճակում: Թուրքիան այսօր հանդիսանում է Եվրոպայի համար ռուսական և տարածաշրջանային գազի ու նավթի տարանցման և վերաարտահանման առանցքային խաչմերուկ, և առնվազն միջնաժամկետ հեռանկարում կպահպանի այդ կարգավիճակը՝ դրանից ստանալով հսկայական ֆինանսական եկամուտներ և քաղաքական դիվիդենտներ:

Այս իմաստով Թուրքիա-Ադրբեջան համագործակցությունը՝ կասպյան էներգակիրները դեպի եվրոպական շուկա մատակարարելու հարցում, դեռևս չի կորցրել իր ներուժը, և Անկարան ու Բաքուն շարունակում են այդ համագործակցությունից առավելագույն օգուտ ստանալ: Միայն Ադրբեջանի եկամուտը դեպի ԵՄ գազի և նավթի վաճառքից 2023-ին կազմել է շուրջ 20 մլրդ դոլար[117]: Թուրքիայի և Ադրբեջանի այդ կարգավիճակը ձեռնտու է Ռուսաստանի համար, քանի որ այն հնարավորություն է տալիս կարճաժամկետ հեռանկարում որոշակիորեն մեղմել էներգետիկ ոլորտում արևմտյան պատժամիջոցների բացասական հետևանքները: Բացի այդ, Թուրքիան ինքնին հանդիսանում է ռուսական էներգակիրների արտահանման առանցքային շուկա և ամենայն հավանականությամբ դեռևս երկար ժամանակ կպահպանի իր այդ կարգավիճակը՝ անկախ ՌԴ-Արևմուտք հարաբերությունների դինամիկայից՝ հաշվի առնելով Թուրքիայի ակնհայտ կախվածությունը Ռուսաստանից նավթի, գազի, ածխի և միջուկային էներգիայի ոլորտներում:

Սակայն, ինչպես նշվեց, ռուսական էներգակիրների արտահանման վեկտորի փոփոխությունը դեպի ասիական շուկաներ երկարաժամկետ հեռանկարում ռուսական էներգետիկ քաղաքականության մեջ հետզհետե մեծացնելու է Իրանի դերակատարությունը՝ զուգորդվելով էներգետիկ տեսանկյունից Թուրքիայի դերակատարության կրճատմամբ: Առհասարակ, ածխաջրածնային էներգակիրներից հրաժարվելու ԵՄ քաղաքականությունը երկարաժամկետ

---

[116] "Exclusive: Disagreements delay Russian gas hub plans in Turkey", By Reuters, September 14, 2023, https://www.reuters.com/business/energy/disagreements-delay-russian-gas-hub-plans-turkey-sources-2023-09-14/ (այցելվել է 13.10.2023թ.). Վահե Դավթյան, «Ի՞նչ նպատակ է հետապնդում Իրանը՝ ՌԴ հետ համաձայնության գալով», 168 ժամ, 27.06.024թ., https://168.am/2024/06/27/2065692.html (այցելվել է 13.10.2023թ.):

[117] "In 2023, Azerbaijan exported energy resources worth more than €18.8 billion to EU markets", Caspian Barrel, 21.02.2024, https://caspianbarrel.org/en/2024/02/in-2023-azerbaijan-exported-energy-resources-worth-more-than-e18-8-billion-to-eu-markets-eurostat/ (այցելվել է 13.10.2024թ.):

հեռանկարում կարող է ստիպել տարածաշրջանի բոլոր էներգետիկ արտահանողներին իրենց հայացքն ուղղել դեպի ասիական շուկաներ:

Այս առումով ուշագրավ են Ադրբեջանի նախագահի հայտարարությունները՝ կապված ԵՄ մատակարարվող բնական գազի ծավալների ավելացման հետ: Այս տարվա հուլիսին Շուշիում տեղի ունեցած գլոբալ մեդիաֆորումի ժամանակ Ալիևը հայտարարել է. «Մենք դեռ չենք վերականգնել մեր ներդրումային ծախսերը Հարավային գազային միջանցքում, մեր գազային եկամուտները շարունակում են ուղղվել այդ պարտքի մարմանը: Նրանք (ԵՄ) ակնկալում են, որ մենք միլիարդներ կներդնենք այնտեղ, միաժամանակ ասում են, որ տասը տարի հետո Եվրամիությունը գազի կարիք չի ունենա: Մի՞թե մենք հիմարների նման ենք, ովքեր տասնյակ միլիարդավոր դոլարներ են ներդնելու գազի ոլորտում, որն իրենց պետք չի լինելու»[118]:

Պատահական չէ, որ չնայած 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանի, Թուրքիայի և Թուրքմենստանի միջև դեպի Եվրոպա բնական գազի արտահանման շուրջ բանակցությունների ակտիվացմանը[119], այս ոլորտում էական առաջընթաց չի գրանցվում, բացառությամբ սվոփային եղանակով Թուրքմենստան-Իրան-Ադրբեջան սահմանափակ համագործակցությանը բնական գազի արտահանման ոլորտում[120]: Ավելին, Թուրքմենստանի հնարավոր մասնակցությունը Իրան-ՌԴ էներգետիկ դաշինքին նույնպես թիրախավորելու է առաջին հերթին ասիական (չինական) շուկան, որն այսօր էլ թուրքմենական գազի սպառման հիմնական շուկան է:

Ադրբեջանն իր հերթին բնական գազի և նավթի մատակարարման վերաբերյալ ԵՄ առջև ստանձնած երկարաժամկետ պայմանագրային պարտավորությունները կատարելու նպատակով ստիպված է համագործակցել ինչպես Իրանի, այնպես էլ Ռուսաստանի հետ: Փորձագիտական շրջանակներում գերակայում է այն տեսակետը, որ միայն սեփական ռեսուրսների հաշվին Ադրբեջանը չի կարող իրագործել ԵՄ հետ 2022թ. հուլիսի 18-ին ստորագրված

---

[118] Ильхам Алиев: «Разве мы похожи на глупцов?..», 20 июля 2024, https://haqqin.az/news/322719 (այցելվել է 13.10.2023թ.):

[119] "Understanding the Energy Drivers of Turkey's Foreign Policy", by Francesco Siccardi, Published on February 28, 2024, https://carnegieendowment.org/research/2024/02/understanding-the-energy-drivers-of-turkeys-foreign-policy?lang=en&center=europe (այցելվել է 13.10.2023թ.), "Türkiye-Azerbaijan-Turkmenistan summit to strengthen Turkic world", by Daily Sabah with AA, ISTANBUL, Dec 15, 2022, https://www.dailysabah.com/politics/diplomacy/turkiye-azerbaijan-turkmenistan-summit-to-strengthen-turkic-world (այցելվել է 13.10.2023թ.):

[120] "Caspian contributions to energy security in Europe", JOHN ROBERTS AND JULIAN BOWDEN, Atlantic Council GLOBAL ENERGY CENTER, JULY 2024, https://www.atlanticcouncil.org/wp-content/uploads/2024/07/Caspian-contributions-to-energy-security-in-Europe.pdf (այցելվել է 13.10.2023թ.):

հուշագրով նախատեսվող պարտավորությունները, ըստ որի՝ մինչև 2027թ. Ադրբեջանից ՀԳՄ միջոցով դեպի ԵՄ մատակարարվող բնական գազի ծավալը պետք է հասցվի տարեկան 20 մլրդ խ/մ: Հաշվի առնելով Ադրբեջանում բնական գազի պահանջարկի աճը, նոր հանքավայրերում ներդրումների բացակայությունը և միջնաժամկետ հեռանկարում գործող հանքավայրերում արդյունահանման ակնկալվող կրճատումը՝ Բաքուն ամենայն հավանականությամբ փորձելու է ոչ թե մրցակցել, այլ համագործակցել Մոսկվայի և Թեհրանի հետ[121]: Նմանօրինակ իրավիճակ է նաև նավթի ոլորտում, որտեղ ադրբեջանական արդյունահանությունն արդեն իսկ գտնվում է բնական ռեցեսիայի փուլում:

Այսպիսով, տարածաշրջանում աշխարհաքաղաքական և էներգետիկ բալանսի փոփոխությանը զուգահեռ Թուրքիան և Իրանը, ինչպես նաև Հարավային Կովկասի մյուս երկրները փորձում են իրենց էներգետիկ քաղաքականությունը համապատասխանեցնել նոր իրողություններին՝ օգտվելով ի հայտ եկած հնարավորություններից և նվազագույնի հասցնելով հնարավոր ռիսկերը: Տարածաշրջանի երկրները, այդ թվում՝ Իրանը, Թուրքիան, Ադրբեջանը, Թուրքմենստանը, Իրաքը և այլք, առնվազն էներգետիկ ոլորտում շարժվում են ոչ թե հակադրման, այլ համագործակցության ճանապարհով: Այս տեսանկյունից անհասկանալի է էներգետիկ ոլորտում Հայաստանի գործող իշխանությունների քաղաքականության տրամաբանությունը:

Մի կողմից ՌԴ հետ հարաբերություններում արհեստական խնդիրների ստեղծումը, տարբեր ոլորտներում համագործակցության տորպեդահարումը՝ սկսած ատոմակայանի հետագա ճակատագրի շուրջ ՌԴ հետ համագործակցության շուրջ անորոշությունից, վերջացրած ռուսական գազը ադրբեջանականով փոխարինելու մասին հայտարարություններով, կասկածի տակ է դնում հենց Հայաստանի էներգետիկ անվտանգությունը: Այս իմաստով պատահական չեն արևմուտքից հնչող նախազգուշացումները, որ Հայաստանը կարող է ստիպված լինել «մի քանի ցուրտ ձմեռ անցկացնել»[122]:

Մյուս կողմից, Հայաստանը որևէ նախաձեռնողականություն չի ցուցաբերում տարածաշրջանի փոփոխվող էներգետիկ ճարտարապետության մեջ իր դիրքը հստակեցնելու ուղղությամբ: Եթե արևելք-արևմուտք էներգետիկ միջանցքին Հայաստանի մասնակցությունը մեծ մասամբ արգելափակված է Թուրքիայի և Ադրբեջանի կողմից, ապա հյուսիս-հարավ ուղղությամբ Հայաստանի պասիվ և ոչ նախաձեռնողական քաղաքականությունը ավելի շատ գործող իշխանության

[121] «Էներգետիկ ճգնաժամը Եվրոպայում և ադրբեջանական գազի գործոնը», «Լույս» հիմնադրամ, 20.12.2022թ., https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=333 (այցելվել է 13.10.2023թ.):
[122] "Are Americans preparing to freeze Armenians to spite Russia?", By Anthony Robbins, September 18, 2024, https://www.thecaliforniacourier.com/are-americans-preparing-to-freeze-armenians-to-spite-russia/ (այցելվել է 13.10.2023թ.):

քաղաքական որոշման արդյունք է, ինչպես նաև առկա ծրագրերի իրագործման հարցում հետևողականության բացակայության հետևանք:

Հայաստանի էներգետիկ անվտանգության շահերից է բխում ակտիվ մասնակցությունը հյուսիս-հարավ ուղղությամբ էներգետիկայի ոլորտում իր հարևանների միջև զարգացող համագործակցությանը: Հայաստանը պետք է ակտիվորեն ներգրավվի Իրանի և Ռուսաստանի, հեռանկարում նաև Թուրքմենստանի և այլ երկրների միջև ձևավորվող էներգետիկ դաշինքին:

Այս տեսանկյունից պետք է արագացնել այնպիսի ծրագրերի իրագործումը, ինչպիսիք են Հայաստան-Իրան երրորդ բարձրավոլտ էլեկտրագծի կառուցումը, որը պետք է կյանքի կոչվեր դեռ 2019-ին և ամեն տարի անհասկանալի պատճառներով հետաձգվում է: Պետք է հստակեցնել և նոր թափ հաղորդել ՌԴ հետ համագործակցությանը հայկական ատոմակայանի շահագործման և նոր ատոմակայանի կառուցման հարցում:

Առհասարակ, ՌԴ և Իրանի հետ էներգետիկ հարաբերությունները էական վերանայման կարիք ունեն: ՌԴ-ից «էներգետիկ կախվածության կրճատման», իսկ իրականում ռուսական գազը ադրբեջանականով փոխարինելու (կամ նույն ռուսական գազը Ադրբեջանից գնելու) անհեռատես քաղաքականությունը հարկավոր է փոխարինել Ռուսաստանի և Իրանի միջև էներգակիրների տարանցման հանգույց դառնալու գաղափարով:

Օրինակ՝ հաշվի առնելով Իրանի հյուսիսային շրջաններում բնական գազի պահանջարկը և գազի սվոփային առևտրի ոլորտում Իրան-ՌԴ համագործակցությունը՝ Հայաստանը կարող է դիտարկել Իրան-Հայաստան գազատարը ռևերսիվ եղանակով օգտագործելու հեռանկարը: Սա Հայաստանին հնարավորություն կտա դառնալ դեպի իրանական շուկա ոչ միայն էլեկտրաէներգիա արտահանող, այլև բնական գազ տարանցող երկիր: Հաշվի առնելով ռուս-վրացական հարաբերություններում վերջին տարիների դրական տեղաշարժը, այս ոլորտում Թբիլիսին նույնպես կարող է շահագրգռվածություն ցուցաբերել:

Հաշվի առնելով Իրանի և Ռուսաստանի միջև էլեկտրական ցանցերի միացման շուրջ ակտիվ աշխատանքները[123]՝ Հայաստանը այս գործընթացում կարող է ամենաակտիվ մասնակցությունն ունենալ, ինչը թույլ կտա հայկական էլեկտրաէներգիան արտահանել ոչ միայն դեպի իրանական, այլև մերձավորարևելյան այլ շուկաներ, օրինակ՝ Իրաք: Բնական գազի,

[123] “«Электрокоридор»: Россия – Закавказье – Иран”, Алексей Чичкин, СТОЛЕТИЕ, 20.12.2022, https://www.stoletie.ru/rossiya_i_mir/elektrokoridor_rossija__zakavkazje__iran_401.htm (այցելվել է 13.10.2023թ.):

էլեկտրաէներգիայի տարանցման հեռանկարը Հայաստանին հնարավորություն կտա մի կողմից ամրապնդել սեփական էներգետիկ անվտանգությունը, մյուս կողմից դուրս չմնալ տարածաշրջանի էներգետիկ գործընթացներից:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: